№ 6 (203) XIX ՏԱՐԻ ՅՈՒՆԻՍ 1909

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻԱՆ" ՕՐԳԱՆ

ԱՂԷՏԷՆ ԵՏՔԸ

Կիլիկիոյ աղէտին լուրերը հետզհետէ աւելի ահարկու կը դառնան և նորանոր մանրամասնութիւնները, ընիկ և օտար աղբիւրներէ քաղած, ոչ միայն չեն մեղմացներ արհաւիրքը, այլև յարաճուն շեշտ մը կը դնեն և կը փոխադրեն մեզ այն դարերուն մէջ, ուր բարբարոս մարդկութիւնը կը ծաղկէր իր բնազօր վայրագութեանը մէջ։ Քսաներորդ դարու մարդկութիւնը անօրինակ երևոյթի մը հանդիսատես կըլլայ և չկրնար բացատրել այդ արիւնի կուապաշտութիւնը որ քանի տարիներէ ի վեր կը շարունակուի Թիւրքիոյ մէջ։ Ինչ բանի ալվերագրեն պարզելու համար այդ շարունակող արիւնողբերգութիւնը, բան մը մութ կը մնայ և խորհրդաւոր։ Մոլեռանդութիւնը, ցեղային ատելութիւնը, գոյութեան կռիւը, ոչ մէկ կերպով չեն լուսաբաներ և արդարացներ տարօրինակ արիւնռուշտ բնազդ մը, որ մասնաւոր նրբութիւն և չարաշուք արուեստ մը կը դնէ իր արարքին մէջ։

Տիեզերք միաձայն է յայտարարելու՝ որ բարբարոսութիւնը և գազանութիւնը այդքան սերտ կերպով զուգաւորուած չէին մարդ-էակին դժբախտ գոյութեան դէմ։ Հալէպի Ֆրանսական հիւպատոսը որ 1895-ի Կարինի կոտորածին ներկայ եղած է, սա տողերը կը գրէր Կիլիկիոյ ջարդերու մասին. „Ես կը կարծէի այն ատեն որ մարդկային ամենամեծ սարսափները տեսած էի, բայց այս անգամ Կիլիկիոյ մէջ կատարուածները գերազանցեցին առաջինները"։

Արդարև խլամ խուժանը, մանաւանդ Կիլիկիոյ մէջ, ուր կը կազմէ մարդկային կեանքի մրուրը, հիանալի *maestra*-ով մը դերակատարած է մարդկային ողբերգութիւնը և աւերագործած։ Վիպական անսահման երևակայութիւն մը անընդունակ պիտի ըլլար ըմբռնելու որ բնութիւնը այդքան չարութիւն կրնայ հիւսած ըլլալ ընկերական էակին հոգուն մէջ։ Աբդիւլ Համիդ իր երեսնամեայ թագաւորութեան մէջ բոլորովին վատասեռեց այդ ժողովուրդը, զոր ոչ միայն նիւթապէս կործանեց այլև բարոյապէս մահացուց։

Բանականութիւնը և տրամաբանութիւնը կը կորսնցնեն իրենց թելը այդ աւերակոծ տեսարաններուն առջև. մարդ կընդարմանայ կը մնայ իր մտածումին, ըմբռնողութեան ու կարեկցութեան մէջ։ Թերևս „խելագարութիւնը" միայն խօլ ու ամէհի քրքիջի փիլիսոփայութիւնը ունենար այդ արիւնոտ թատերգութեան բեմին վրայ... մարդկօրէն մտածումէն դուրս ըլլալով. քրքիջ մը որ ոռնալ տար Տօրոսի սարերուն։

Դէպի կարմիր մահերը անվերջ ուխտագնացութիւն մըն է որ հայը կը կատարէ Թիւրքիոյ մէջ և, կարծես, ճակատագրուած է իրեն պատանքը հագած մանգալ։

Կոտորած, աւարառութեան ոգի, առևանգում, բռնաբարում, հրդեհում, ահա դաժան լսարերը մեր հայրենակից թիւրք ամբոխի քնարին։ Կը թւի թէ կեանքը ոևէ նշիրականութիւն չունի այդ ամբոխի համար, և դարերը... ետ ետ կերթան այդ երկրին մէջ։

Ինչպէս հետզհետէ երևան ելլող փաստերը ցոյց կուտան, Թիւրք տգէտ ամբոխը, իր էշրէֆներով, կը պատրաստուէր, Աբդիւլ Համիդի հարուածէն յետոյ, ընդհանուր ջարդով մը վերջ տալ Անատոլիի մէջ հայերու գոյութեան որ պաշտպանելով Սահմանադրութիւնը, կը խանգարէին յետադէմ տարրի դարաւոր քունը և անուշծուլութիւնը։ Իսկապէս այնպիսի ծածուկ և խուլ դաւադրութիւն մը կազմուած էր, որ կարելի է ըսել թէ, հայերը հրաշքով իրենց պատմական գոյութեան մեծ վտանգը անցուցին։

Պէտք չէ ուրանալ որ հոն՝ ուր իշխանութիւնները մարդասէր ու կորովի դիրք բռնած են, կոտորածի առջևը առնուած է։ Եդեսիայի կառավարիչ Սալիհ պէյ հմակրելի դէմքերէն է, որոնք իսկապէս *empire builders*-ներն են կայսրութեան և „մարդեր" քաղաքակիրթ ըմբռնումով։ Այդպիսի անհատները, իրենց մարդկային զգացումով ու ազնիւ վարմունքով աւելի ծառայութիւն կը մատուցանեն հայրենիքին, ժողովուրդներու համերաշխութեան, քան անգոյն խորհրդարան մը, որ ցարդ իր բարձր կոչումին մէջ նժարին մէկ կողմը կեցած է։

Այդ անձնաւորութիւնը փրկեց Եդեսիայի պէս դժբախտ քաղաք մը, ուր 3,000 ողջակէզ հայերու յիշատակը դեռ թարմ է...

Օսմանեան աղատութիւնը իր հմայքէն ու լուսապակէն մեծ բան մը կորսնցուց։ Ատանայի անլուր գազանութիւնները պապանձեցուցին ներբողի սրինգ-

ները, որ Թիւրքիոյ „անարիւն, խաղաղ ու խելացի“ յեղափոխութիւնը կը հովուերգէին։ Շատերը Թիւրք ժողովրդի ժուժկալ ու անոգեղէց կաղմին մէջ ուզեցին գտնել „ողջմիտ ու չափաւոր“ ոգին որ խոյս կուտայ արիւնոտ տեսարաններէ, կսրմիր յեղափոխութիւններէ, և այդ պատճառով „ջրարբու“ներու յեղափոխութիւն ևս կոչեցաւ յուլիս 24-ի շարժումը։ Վաղահաս էր սոյն դատաստանը, թերևս պուտ մը գինի աւելի յարմար ըլլար ուրիշ պապակներ մարելու համար։

Ոչ միայն Օսմանեան Ազատութեան հմայքը տուժեց աշխարհի առջև, շնորհիւ կոյր ու անգիտակից ամբոխի մը և ոչ-անաչառ կառավարութեան մը, այլ և որոշ յեղաշրջում մը կատարուեցաւ մտքերու ու սրտերու մէջ։

Սահմանադրութեան հաստատումէն յետոյ հայ ժողովրդի խանդավառ յափշտակութիւնը սահման չունէր. ան մոռցած էր անցեալը, հակառակ բանաստեղծի անէծքին,

„Թէ այսքան չարիք մոռնան մեր որդիք,
Ամբողջ աշխարհ հայուն կարդայ նախատինք“։

Թիւրքերը բնականաբար իրենք ալ զարմացած էին հայ ժողովրդի անյիշաչարութեան վրայ, որ ցնծութեան քայլերով ու գրկաբաց կ'ողջունէր նոր թեականը։ Անոնք կը կարծէին որ հայերը քրմուհիի մը պէս, սեի ու սուգի մէջ պլլած պիտի ընծայաբերէին Ազատութեան դիցուհիին։ Ընդհակառակը, երկրի մը ազատագրութեան տօնախմբումին մէջ, անոնք շեշտ մը գրին ջինջ, սրտաշարժ և էապէս մարդկային։ Հայ գիւղացին պատրաստուեցաւ սօթեալ թեևերը գուլթանին կպելու ու հողին խոպանութիւնը մշակելու և անդաստանելու։ ան կարծես կը քաշէր անուշ հօհներուն որ կը հեռանի արգասաւոր ակօսներուն։ Ցարդ բայց և ստրուկ որ կը ծառայէր պէյերու, փաշաներու ու անխիղճ պաշտօնեաներու քմահաճոյքներուն, այժմ իբր ազատ քաղաքացի կը հրաձէր և կուզէր ծառայել ընդհանուր հայրենիքին։

Թիւրք խուժանը չուզեց հասկանալ հոգեբանական այդ եռանդը։ ողբերգութիւն հարկաւոր էր իրեն՝ որուն ընտանեցուցած էր նախկին փատիշահը։

Ատանայի ողբերգութենէն յետոյ, դատական կատակերգութիւնն է որ կուգայ մեր երևակայութիւնը խոշտանգել։

Կառավարութիւնը բոլոր ճիգը կը թափէ խեղդամահ ընելու ճշմարտութիւնը հերքելու զօրքերու ակներև մասնակցութիւնը կոտորածին և ձգելու ծանր պատասխանատուութիւնը հայերուն վրայ, արհամարելով նոյնիսկ ողջմտութեան պահանջները, խղճի ձայնը և չսոսկալով ունացող հակասութիւններէն, առանց մտաբերելու ոչ, տարիէ մը ի վեր, զուլումի աշխարհին մէջ ազատութեան նարօտները ծաղկեցան և օսմանեան կայսրութիւն մը հիմնուած է... արդարութեան ափերուն վրայ։ Թէև դեռ կը յուսանք որ, երկրին ընդհանուր շահերու տեսակէտով, այս վիճակը էշարունակուիր և կառավարութիւնը կանդրադառնայ իր սխալին վրայ և վերջ կը դնէ ապերասան ապօրինութեան։

Մթին սադրանքներ, սպառնալիքներ, դատաստանական կնճռումներ մասամբ յաջողած են հայերուն վրայ նետելու դատապարտութեան բշամիտը։

Տէրէպէյիներու աշխարհին մէջ Զինուորական ատեան մը կը գահակալէ, սահմանադրական կառավարութեան կողմէ... ճշմարտութիւնը մերկացնելու և արդարութիւնը գործադրելու համար։ Այդ ատեանը ճշմարիտ հաւատաքննութեան ատեանի մը տպաւորութիւնը կը թողու և որ նոյնքան հեռ, կիրք ու միակողմանութիւն դրաւ իր քննութեան ու վճիռներուն մէջ։ Իր բոլոր ստուգութիւնները հիմնուած են կոտորածներու հեղինակներու, էշրէֆներու սուտ վկայութիւններուն վրայ, որոնք ոչ միայն հայերը ամբաստանեցին շնականօրէն, այլ և սպառնացին կառավարութեան՝ Անատօլիի մէջ ընդհանուր հայկական ջարդ առաջ բերել, եթէ կառավարութիւնը համարձակէր ոնէ թիւրք դատապարտել։ Սա հին ըմբռնում մըն էր, որ սակայն յաջողեցաւ նոր ըէժիմին օրով, և Զինուորական ատեանը պատուհասի խոշոր բաժինը յատկացուց դժբախտ հայերուն։

Թարեկարգ ու գիտակից կառավարութիւն մը պիտի չհամարձակէր այդքան անիրաւ ու ապօրէն ընթացք մը բռնել դէպի ժողովուրդ մը, որ 30,000 զոհ տալէ յետոյ, մոխիրի վրայ նստած, իր ուղեղը կը քրքրէ և չկրնար իմաստը հասկնալ սոյն զարհուրելի եղբայրասպանութեանը իր թիւրք հայրենակիցներու կողմէն, որ երէկ եղբայրութեան, հաւասարութեան անուններով օդը կը թնդացնէին։ Այդպիսի անպատմելի դաւաճանութիւն մը, ծարնաքի հարուած մը կենակէն, ոչ մէկ արդարացում չվերցներ։

Վեց հայ կախեցին և ինը թիւրք։ Վեց անմեղ հայ արհեստաւորներ որ կրնային աշխարհի երեսին պռռալ և ըսել Տէրէքէմենայի պէս, թէ կը մեռնէին „առանց յանցանքի“, և շատ մը հայերալ դատապարտուած են մեծագոյն պատժի իսկ ոճիրի հեղինակները, ընդհակառակը կը մնան անպատիժ։ 30,000 հայ կոտորող խուժանէ մը ինը անվարտի թիւրք գտած են միայն, կոյր գործիքներ վոլիին և էշրէֆներուն ու յետադիմական պարագլուխներուն, ու կախած իսկ քանի մը հոգի՝ ալ ենթարկած են թեթեւագոյն բանտարկութեան։ Այս օրինակներևոյթները չեն բացատրիր և դայրոյթի զգացումները կընկրկին այդքան անմարդկայնութեան առջև։

Եւրոպական մեծ թերթի մը խմբագիրը, որ մեծ հիացում ունեցաւ դէպի Երիտ. Թիւրքերու շարժումը, սա մասնաւոր տողերը կը գրէր մեզի „Ատանայի մէջ վեց հայերու կախաղան հանելը ապշեցնող ու անըմբռնելի է պարզապէս, կը ցանկայի յոռետես չըլլալ Թիւրքիոյ նոր ըէժիմին հանդէպ“։

Զինուորական „արդարադատ“ ատեանը չուզեր բաւականանալ դերերը շրջելով, այլև կարծես պաշտօնունի անարգել զոհերը և սրտաբեկել ու ծայր յուսահատութեան մղել հայ տարրը։ Կամ այդ ատեանը անձեռնհաս է, կամ կառավարութեան որոշ թելադրութիւնով կը շարժի և կամ բարոյական ոևէ զգացումէ զուրկ՝ մասնաւոր վրէժխնդրութեան ոգի մը կը դնէ իր դատաստանական եղանակին մէջ։

Կը խողխողեն հայ ժողովուրդը մոլեգնութեան բոլոր թափով և բարբարոսութեան բոլոր երանգներով, կառավարութիւնը կը բռնադատէ զայն, հզօրագոյնի իրաւունքով, որ կուլ տայ իր արցունքը և լռէ—կարծես ուզէր ըսել, որ մեռելները արդէն բաւական խօսուն են—և, ինչ որ խելքէմտքէ դուրս է, կը պնդէին որ զոհը խոստովանի թէ ինքն է մեղաւորը։

Այս վերջին թէզը պաշտպանելու համար կառավարութիւնը իր մամուլին և հեղինակաւոր անձերու բերնով, հակասութենէ հակասութիւն գլորեցաւ։ Մուխթար փաշա Փարիզի մէջ այդպիսի ստութիւն մը էր որ բմբշխնել կուտար մամուլին. բայց, ինչպէս կերևի, աւելի հեշտ է պատերազմի մէջ հերոս դառնալ, քան ճշմարտախօսութեան մէջ։

Կառավարութիւնը կուզէ ներշնչել մեզի „միլէթը հաբիմէի“ երկիւղը—որ հեռու է սակայն իսլամութեան սկիզբը ըլլալէ—և հասկցնել որ ինք իր ուղածը կրնէ։ Ատանայի առաջնորդին դատապարտութիւնը, Հաճբնի առաջնորդին և ուրիշներու անյանցապարտ ձերբակալումը կառավարական կամայականութիւն մը ցոյց կուտան, ահաբեկութեան բարբարիկ ձև մը երևակայութիւններուն վրայ ազդելու համար։ Բայց ի՞նչ կարժէն այդպիսի ճարտարամտութիւնները իրականութեան պերճախօսութեան առջև։

Ատանայի մուֆթին, կոտորածի կազմակերպողներէն մէկը, Եգիպտոսի Ալ Ազհարի մեծ Շէյխին գրած նամակի մը մէջ, համչնալով, ի միջի այլոց սա անպատկառ սուտը կը փսխէր. „Հայերը արդէն իրենց թագաւորը ընտրած և անկախութիւնը հռչակելու վրայ էին“։ Մուֆթին կը մնար, ապա ուրեմն, երկու ելք կամ փէշերը ժողվել ու կծիկը դնել հայկական բանակներու առջևէն, կամ կոտորել տալ հայերը անխտիր։ Ալլահի պաշտօնեան վերջինը ընտրեց... իր հայրենիքը փրկելու համար։ Մեծ Շէյխը Կիլիկեան խժդժութիւններու ատեն դիմութեան ձայն բարձրացուցած և „ճիհատ“ յայտարարած էր կոտորածներուն դէմ՝ որ կանպատեան մարդկութիւնը և իսլամութիւնը։ Մուֆթին, այդ կրօնական գայլը, չէր հանդուրժեր որ իսլամ հոգևորական մը կարող ըլլայ կարեկցութիւն յայտնել դէպի քրիստոնեան ու կը մտածէ մրոտել այդ նենգամիտ նամակը և կերպով մը ալ յանդիմանել Շէյխը։

Երբ խորը կը մտնենք ու անաչառօրէն կը վերլուծենք եղելութիւնները, կը յանդիմանք այն եղրակացութեան, որ հայերուն միակ ու աններելի „յանցանքը“ ինքնապաշտպանութիւնն է եղած. ոչ մէկ լուրջ ու գրական փաստ չկայ, որուն կարող ըլլայ կառչիլ կառավարութիւնը մեղմացնելու համար թիւրք խուժանին տարարքը։ „Հայերու կողմէ բացի ցուցամոլութենէ ու անտեղի ազմուկներէ ուրիշ ոևէ փաստ բան չէ ըլլած“, կը գրեն շատ մը եւրոպացի թղթակիցներ։ Ճիշտ է, որ հայերը բարձրաձայն պանծացուցին ազատութիւնը խուժանի մը հանդէպ՝ որուն համար այդ ազատութեան օրը սուգի օր կը համարուէր։ Սակայն այդպիսի դժոխային թագաւորութենէ մը յետոյ, սմենայնչին ազատութիւն մը իսկ պէտք էր ուրախութեան ամբոխներ յարուցանէր. և շատ բնական էր։ Եթէ հայերն ալ չկատարէին այդ ցնծութիւնները, սահմանադրութեան հռչակումը Կիլիկիոյ մէջ մուլ ու բռնազբօսիկ կերպարանք մը պիտի առնէր։ Այդպիսի պատմական մեծ օրեր պէտք է առաջ բերեն ժողովրդական ինքնաբեր և դղրդուն արտայայտութիւններ. որովհետև սրտուրախ ու երջանիկ ցոյցերն են որ կը նշիրագործեն օրուան կամ դէպքին մեծութիւնը, ապա թէ ոչ սգահանդէս մը կը դառնայ։

Այդ շատ բնական ցոյցերը և տարբրական ինքնապաշտպանութիւն մը միթէ պատճառներ էին որ մարդկութեան թատերաբեմին վրայ այդպիսի անգութ առասմեր կատարէին։ Իսլամ խուժանը չհանդուրժեր որ հայը ինքնապաշտպանութեան ընդունակ ըլլայ. ան պէտք չէ վեր պրլի ճակատագրի հարուածներուն դէմ... և սրբագրէ պատմութիւնը։

Ներքին գործոց նախարար, Դէրիդ փաշա, Ատանայի սոսկումներու թարմ ու ծանր պատասխանատուութեան տակ, կը խնդրէր Եւրոպայէն „սպասել և վստահիլ իրենց արդարադատութեան“։ Դէրիտ փաշան—որուն մէջ քաղաքակիրթ ըմբռնումները բոլորովին անհետ չեն ըլլած կրօնամոլութիւնները—նկատուած է Թիւրքիոյ պետական էն կարող անձնաւորութիւններէն մէկը, սակայն կը թուիլ էր մեծ Ռաշիդ փաշան որ 1846-ին և համանման պարագայի մը մէջ կրսէր Եւրոպային. „Կընդունիմ որ դեռ լաւ չենք կառավարեր, բայց կարդիլեմ աւելի վատ կառավարելէ, կը խնդրեմ Եւրոպայէն հաւատալ ինծի“։

Երկու թիւրք պետական անձնաւորութիւններ, տարիներու հոլովումէն յետոյ, միևնոյն տեսակէտներուն դէմ առ դէմ կը գտնուին և միևնոյն մեղադրանքը կը նուագեն Եւրոպային. սակայն Ռաշիտ փաշան անկեղծ էր։ Ցաւնկալի է որ կէս դար վերջը Թիւրքիան այսպիսի ցաւագին արդարացումի մը կարօտը չըլլայ և գտնուի այնպիսի նախարար մը որ, ամէն բանէ առաջ, ներքին պարկեշտ քաղաքականութիւն մը որդեգրէ։ Թիւրքիոյ ներքին գործոց նախարարը Ատանայի արդ-

հաւիրքներուն հանդէպ՝ արդարութեան աչքին փոշի փչեց և զայն ստորադասեց մութ ու անսահմանադրական նկատումներու. հանրային խիղճը չկրնար արդարացնել զինքը։ Տխուր պիտի ըլլար եթէ սահմանադրական Թիւրքիան չգիտնար զանազանել ոճրագործը զոհէն և ներկան համիդեան շրջանէն, ուր մարդիկ կառավարել ըսելով կը հասկնային առևանգել, թալանել, խողխողել և Տակիտոսի խօսքերով „հոն ուր անապատ կը դարձնէին, կըսէին, խաղաղութիւն տիւնք“։

Խոստումներ միայն կը շռայլեն հայերուն, երբ անդին անգթութիւնը անայլայլ կը շարունակի դատավարութեան ձևին տակ։ „Ճակատագրական բան մը կարծես կը ծանրանայ Հայաստանի վրայ, կըսէր Ֆրանսիացի հրապարակագիր մը, անոր որդիքը ամեն պարագաներու ողջակէզներն են, իր արիւնը ամեն արշալոյսներու ցօղն է“։ Հեռու մնէ այդպիսի արշալոյսները՝ ուր արդարութիւնը կը ծաղրէ նոյն ինքը արդարութիւնը և ուր բարբարոսութիւնը կը խնդայ օրէնքի քթին։

Օսմ. Խորհրդարանը, որքան ալ նոր և անփորձ, կնպաստէր որ աւելի բանաւոր և մարդկային ըլլար և աւելի բարձր նկատումներէ առաջնորդուէր ներքին այդպիսի մեծ աղէտի մը հանդէպ. իր դիրքը աներկիւղ և անվերապահ ըլլալէ հեռու էր, պէտք է խոստովանիլ. մինչդեռ Խորհրդարանը ինքը պէտք էր տալ հզօր զարկը համերաշխութեան ու սիրոյն որ կը զօդեն տարրերը և սերտօրէն կը կապեն զանոնք երկրին ու օրէնքին։

„Համաշխարհային խաղաղութեան“ համար „Միջազգային խորհրդարանի“ մը ստեղծումը կը ջատագովէր նոյն Օսմ. Խորհրդարանը։ Սա վաղահաս էր այնպիսի երկրի մը ներկայացուցիչներու կողմէն, որ իդէալականութեան և դաժան ըմբռնումներու մէջ կը տարուբերին և գեղեցիկ բարեցանկութիւններու հետ խուժանային բնազդներու առջև ալ գիտեն դեռ անխռով մնալ։ Շատ լաւ կըսէր եւրոպական կարևոր թերթ մը՝ „օսմանեան Խորհրդարանը աւելի լաւ կընէր, համաշխարհային խաղաղութեան մասին մտածելէ առաջ, իր երկիրը խաղաղեցնէր“։

Սա պարզ ու բնական ողջմտութիւնն է, որուն պէտք է լծուի Օսմ. Խորհրդարանը։ Թիւրքիոյ մէջ այնքան բան կայ ընելիք, որուն կէսը եթէ կարելի ըլլայ իրագործել, արդէն երկիրը բարեկարգուած կարելի է համարել և խիղճերը հանգստացած։ Ոչ մէկ բանիբուն անհատ պիտի չուզէր հրապուրիլ այդպիսի համաշխարհային ցոյցերով, երբ Թիւրքիոյ մէջ քաղաքական ու քաղաքացիական առաքինութիւնները ու հասարակական դաստիարակութիւնը դեռ չեն կրցած իրենց ջղերը գտնել և վաղուան անստուգութիւնը ու վայրենի թշնամութիւններն են որ կը լլկեն միտքերը։

Ամեն հայ կը կարծէ որ իր դժբախտ ճակատագրին շուրջ խուլ ու սև դաւադրութեան ոգիները կը սլքտան և մահուան խայթոցները կը սրեն։ Դաժան յուսախաբութիւն մը կը պարաւանդէ իր էութիւնը, և սակայն մենք կը ջանանք բարոյական մեր բոլոր ուժով հակամարտիլ սրարշաւ յոռետեսութեան դէմ։

Տխուր ու ճնշող բան է անշուշտ տեսնել ժողովուրդ մը, ինչպէս Թիւրք ժողովուրդը, որ չզգար այն հոյակապ գործը զոր կատարեցին բուն իսկ իր զաւակները, փրկելով երկիրը ահուելի հրէշէ մը։ Ճիշտ է անոր գուլ հոգին, տարաբախտաբար, շատ չսարսռաց արտոյտին երգով որ Ազատութեան արշալոյսին դէպի մեծ առաւօտը կը սլանար, և իր աչքերը խանդագին չսևեռեց դէպի աստղերը։ Բայց մենք կուզենք դեռ լաւատես ըլլալ և չենք ուզեր հաւատալ որ Թիւրքիան „անուղղայ“ է։

Կուզենք պատմական լաւատեսութիւնը ունենալ, թէ Թիւրք ժողովուրդը, շնորհիւ իր ազատասէր զաւակներու գերագոյն ջանքերուն, պիտի մտնէ մարդկայնական շաւղին մէջ և պիտի գայ մէկ օր որ պիտի ամօթահարի իր անցեալէն։ Արիւնի հեղեղները չեն որ վերջապէս կանգուն կը պահեն կայսրութեան հիմերը, որ արդէն լլկած ու փտած է նոյն արիւնին մէջ։

Անպայման պէտք է կատարուի այդ բարոյական բարեշրջումը Թիւրք ժողովրդին մէջ։ Վիկտոր Էմմանուէլ, Իտալիոյ ազատութենէն յետոյ, կ'ըսէր. „Իտալիան շինեցինք, կը մնայ իտալացիները մարդ ընել“։ Պէտք է ամեն լուսամիտ և հայրենասէր Թիւրք այս մտածումը ունենայ, պէտք է մարդկայացնել Թիւրքիան և ջնջել անոր մէջէն մահուան թագաւորութեան հետքերը. պէտք է կերտել կորովի ձեռքերով, բարոյական մեծ շէնքը, առանց որու աշխարհի բոլոր սահմանադրութիւնները ունայնութիւններ են։

Սակայն պէտք չէ կոյր ըլլալ կարգ մը ցաւալի երևոյթներու վրայ, որոնք ընոյթը ունին մեր հաւատքը մոլորեցնելու։ Անանայի կոտորածին մեծագոյն և գլխաւոր հեղինակները անպատիժ մնացին—վալին, կարգ մը հեղինակաւոր անձեր և „Իթիտալի“ի խմբագիրը Իհսան Ֆիքրի։ Այս պարոնը, իբր թէ գրչի և մտքի մարդ,—և, դժբախտաբար,—ամենէն մեծ ոճրագործը պէտք է համարել, ան եղած է որ խուժանի մոլեռանդ երևակայութիւնը գրգռած և դէպի արիւն մղած է։ Եթէ „Իթիտալ“ի խմբագիրը իսկապէս իթթիհատական մըն է,—ինչ որ չէ կարելի հաւատալ, որովհետև „իթթիհատականները“ իրենք առաջին զոհերն եղան արիւնռուշտ յետադիմութեան—պէտք է ընդունիլ թէ անոնց շարքերուն մէջ կը գտնուին նոյնքան անարժան ներկայացուցիչներ որ չգիտեն առաքելութեան պաշտօնը կամ ոչխարի մորթով գայլեր են։ Ուրիշ մը վէհկիպ պէյ, Պիթլիսի և Վանի շրջանի առաքելութեան մէջ, նոյնպէս չէ կրցած իր կոչումին բարձ-

րութեան վրայ ըլլալ։ Մեր թղթակիցը ժամանակին նկարագրած էր մեզի անոր երկդիմի դերը հայ և խալամ ժողովուրդներու միջև, բայց մենք փափկանկատօրէն չհրատարակեցինք. ահա թէ ինչ կը գրէին մեզի պիթլիսէն։ „Վէհիպը հոս գալէն ի վեր իրերու դրութիւնը կարծես միանգամայն փոխուեցաւ։ Այս մարդը որ կը ներկայացնէ Մ. ու Յառաջադիմութեան կոմիտէն, այնպիսի մի ատելութիւն սերմանեց, այնպիսի մի վիհ բացաւ մեր և մեր դրացի թիւրք ու քիւրդ տարրին միջև, որ ապագային դժուարաւ պիտի փակուի... Եթէ ան իր պատկանած կոմիտէի յետին մտքի արտայայտիչն է, հայ ժողովրդի ապագան հեռու է ապահովիչ ըլլալէ“...

Ինչպէս կերևի Վէհիպ պէյը „ոսկեղէն“ ցնծութիւնով մը վերադարձեր է իր առաքելութենէն, և եթէ բէկակիսնը յաղթանակէր, Վէհիպ պէյը օտարութեան մէջ անտարակոյս աւելի երջանիկ իրապաշտութիւն պիտի գտնէր... իդէալական պատրանքէն յետոյ։

Գոնէ այս երկու փաստերը մխիթարական չեն ոչ Խթիհատի կոմիտէին համար, որու մէջ այնքան անձնուէր և անկեղծօրէն հայրենասէր դէմքեր կան, ոչ ալ ժողովուրդներու համերաշխութեան տեսակէտով, որուն համար հարկաւոր են ազնիւ նկարագրի տէր և լայն գաղափարներով օժտուած անհատներ։

Հայերու թուլացումով ու սրտաբեկումով Սահմանադրութիւնը անպայման ուժեղ կուսակցութիւն մը պիտի կորսնցնէ. պէտք չէ սպաննել անոր մէջ խանդավառութիւնը և արգաւանդ սէրը դէպի նոր բէմը որ, ամէն ժողովուրդներէ աւելի, պէտք ունի կենսունակ բարեշրջումի։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՎԵՀԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԵՐԿԻՐԸ

Վարդերով չի սփռուած արքայական թափօրի ճանապարհը։ Ամէն մի քայլափոխում — նոր փոթորիկ ցասումի ու անարգանքի։ Ամէն մի նոր երկրի շէմքում — նոր ինքնատիպ պարսաւանք օգոստափառ այցելուի ճակատին։ „Ծա՜նր է, այո՛, Մօնոմախի գլխարկը“—մտածում է, անշուշտ, Պետերհոֆի կալանաւորը իր դժբախտ ուղևորութեան միջոցին։

Եւ ի՞նչը դրդեց նրան՝ դուրս նետուել կալանաւորի իր վիճակից։ Արդեօք հանգստանալու, լայն հորիզոններ փնտրելու տե՞նչը հմայեցի՞ն նրան, թէ ցեղափոխութիւնն ընկճած է արդէն, երկիրը անդորր, գահը անսասան... թէ՞ գուցէ նա մեկնեց բոլորովին հակառակ մտահոգութիւններով...

Այսպէս թէ այնպէս ցարը զբօսնում է, նա վճռել է ցոյց տալ Արևմուտքին իր „սահմանադրական“ կերպարանքը և մտադիր է շրջան անել ամբողջ Եւրոպայում։

Արևմուտքը դիմաւորում է ցարին։ Եւ երկու հակադիր քաղաքակրթական էութիւնները, երկու տարբեր բարոյագիտական չափերը բաղխւում են իրար՝ այդ հանդիսաւոր դիմաւորումի ընթացքում։ Մինը—բուրժուազիան, միւսը—սոցիալիզմը։

Առաջինը խնկարկում է, երկրորդը՝ նշաւակում։ Առաջինը կեղծում է, երկրորդը — ճշմարտախօս ու վրիժառու Նեմեզիդան — ահաւոր ու սասանեցուցիչ ամբաստանութիւններ է նետում Ռուսաստանի վեհապետի հասցէին։

„An inhuman brute“! ձայնում է սոցիալիստ պատգամաւոր Թօրն անգլիական խիստ բարեկիրթ և մարզած պարլամենտում... Ի՞նչ արժէք ունի այնուհետև նախագահի ու ամբողջ բուրժուական մեծամասնութեան կեղծ կռնչիւնը։ Բառը նետուած է և նա արդէն շրջան է անում տիեզերական մամուլի մէջ։ Պարագաներ կան, ուր բարեկրթութեան, փափկանկատութեան բոլոր նկատումները օդն են ցնդում, որպէս խղճալի ու անհանդուրժելի կեղծութիւններ։ Եւ կապիտալիստական քաղաքակրթութեան այդ պայմանական կեղծութիւններին դիմագրաւելու պարտականութիւնը ընկած է այսօր միմիայն սոցիալիստ կուսակցութիւնների վրայ, որոնք—եթէ մի կողմից անզօր են տակաւին թումբ կանգնելու աշխարհաւեր բռնութիւնների հոսանքի առջև—դէթ յաջողում են թունաւորել բռնապետական այցելուների և նրանց պաշտպան կամարիլլայի հոգեկան հանգիստը, ժողովուրդների վրէժն՝ու ատելութիւնը ժայթքելով նրանց երեսին...

Բրանտինգ—շվեդական պարլամենտում, Թօրն—Անգլիական, Ժօրէս—ֆրանսիական, Մօրգարի—իտալական պարլամենտում, մի-մի պերճախօս ռահվիրաներ սոցիալիզմի ու ռամկավարութեան, կատարեցին այդ վսեմ ու անհրաժեշտ պարտականութիւնը, ամբողջ ազատասէր մարդկութեան հիացմունքի ու ծափահարութիւնների տակ։

Պարլամենտական շանթերը բաւական չեն դեռ։ Խօսքը ժողովուրդներին է, բուն աշխատաւոր ժողովուրդներին, որոնք գաղափարի եղբայրներն են բազմաչարչար Ռուսաստանի յեղափոխական ընդհանրութեան։ Եւ ահա պատրաստւում են միտինգներ ու ցոյցեր տիեզերական մայրաքաղաքում, Labour Party-ի ղեկավարութեամբ։ Պատրաստւում է սոցիալիզմը նաև „դաշնակից“ երկրի մէջ։ Ֆրանսիական բուրժուազիան չը պիտի կարողանայ ընդունել ցարին Պարիզում, ոչ իսկ գաւառական որևէ կենտրօնում, այլ հեռաւոր ու սակաւաբնակ նաւահանգիստ Շերբուրգի մէջ։ Սակայն, այնտեղ ևս թափօրը ազատ չի մնայ ժողովրդական ցոյցերից։

Տարագի՜ր իր երկրում, տարագի՜ր ու մէկուսացած ամբողջ աշխարհում...

Բայց ամենաարժանավայել ընդունելութիւնը պատրաստում է իտալական սոցիալիզմը։ Մօրգարիի ձառը և պարլամենտի միջադէպերը ծանուցին արդէն... Երկրի բոլոր ծայրերում միտինգներ ու կորովի որոշումներ։ Նոյնիսկ ընդհանուր գործադուլի սպառնալիք... ցարի գալստեան առիթով... Հաւանական է թւում, որ վերջինը մի անգամ ևս հրաժարի իտալական իր ուղևորութիւնից կամ թէ համաձայնի տեսակցել Վիկտոր Էմանուէլ III-ի հետ մի խուլ ու հեռաւոր նաւահանգստի մէջ։

Հալածե՜ք ամեն տեղ... Համիդն անգամ դժուար թէ նախանձէր Նիկոլա II-ի ճակատագրին։

„Ինչպէ՞ս կընդունէր Աբդիւլ Համիդը—հարցնում էր ժօրէս քիչ առաջ արտասանած պարլամենտական իր ճառի մէջ—եթէ նա դար Ֆրանսիա այն ժամանակ, երբ ներկուած էր հայերի արիւնով։ Ի՞նչ կը լինէր հանրապետութեան նախագահի դիրքը ցարի հանդէպ, եթէ նա գնար Ռուսաստան այն վայրկեանին, երբ Նիկոլայ II-ը արեան մէջ խեղդում էր ռուս ժողովրդի ազատագրական շարժումը“...

Բողոքի ժխոր է բարձրանում իսկոյն, բայց ամեն ոք զգում է, որ այդ բողոքը շինծու է, բռնաբռնկի։

„Բայց կը գայ մի օր—շարունակում է հռչակաւոր տրիբունը—երբ մարդասպան ցարիզմը դատապարտուած պիտի լինի թափառելու ծովի վրայ և ոչ մի տեղ չը պիտի կարողանայ ափ իջնել“...

Ե՞րբ արդեօք կը գայ այդ օրը...

Դանդաղ է շարժւում շղթայակապ վիթխարին, այնուամենայնիւ շարժւում է։ Ըմբոստութեան աղաղակը մի տեղ խեղդելով, ծայր է տալիս անմիջապէս մի ուրիշ տեղ։ Ըմբոստութեան ու անկախութեան ապացոյցներ է տալիս — ո՜վ զարմանք — անգամ երրորդ Դումման, „սև Դումման“։ Աչքի անցրէք վերջին մի շարք հարցապնդումները և նրանց հետևանքը։ Կամարիլլան չի հանդուրժում նոյնիսկ այդ „սև Դումայի“ գոյութիւնը։ Չի հանդուրժում քննադատութիւնները, որոնք տեղում են շարունակ ձախակողմեան նստարաններից... Այդ քննադատութիւններն ու խարանումները չեն փոխում իրերի վիճակը, ցարը իշխարկին ընդգծիմագրում է իր „ինքնակալ“ veto-ն պարլամենտական վճիռների վրայ, սակայն Դումայի ամբիոնից խօսւած ճառերը ինքնին վտանգաւոր մի պրոպագանդ են ինքնակալ բէժիմի դէմ։ Կատակ բան չէ, երբ սոցիալիստ պատգամաւորը աղաչակում է բռնակալութեան Բաստիլի մէջ, ի լուր ամբողջ Ռուսաստանի՝ „Թող խորտակւի միապետութիւնը“...

Ինչպէ՞ս հանդուրժելուն ացող հակասութիւնը։ Մի կողմից երկրի բոլոր անկիւններում բանտ, աքսոր ու կախաղանով հալածել ամեն կարգի յեղափոխականներին ու սոցիալիստներին, միւս կողմից կայսրութեան „գերագոյն“ հաստատութեան մէջ սրբագործել նրանց ներկայութիւնն ու պրոպագանդը, ականջ դնել նրանց մոլեգին ու գայթակղեցուցիչ խարազանումներին։

Կամարիլլան ատում է այդ հակասութիւնը և ձգտում է վերացնել այն։ Նրա բաղձանքն է տեսնել իբրև կացութեան տէր — սև-հարիւրակեան աջակողմը, Պուրիշկեվիչների ու Մարկովների վոհմակը։ Եւ ոչ մի ջանք նա չի խնայում այդ ուղղութեամբ։ Տեսանք բացարձակ, հրապարակական խրախուսանքներ, ուղղուած այդ վոհմակին... Կայսրի կողմից։ Ամբողջ Ռուսաստանը խուլ ու մոլեգնոտ ցասումով դիտեց կայսերական դեմոնստրատիվ ընդունելութիւնը սև-հարիւրակեան պարագլուխ Դուբրովինին, որ ստացաւ նոյնիսկ դրամական նպաստ իր մարդասպան շահատակութիւնների համար... Ահա հոկտեմբերեան մանիֆէստի բովանդակ „անկեղծութիւնը“։ Երբէք թերևս յաղթական բէկցիան այդքան բիրտ ու վայրագ ձևով չէր ցուցադրել իր ամբարտաւան ուժը։

Այո, և ոչ միայն յեղափոխականների, այլ „Հոկտեմբերեան Դումայի“ գոյութիւնն իսկ ատելի է։ Եւ հալածանքը այդ ողորմելի հաստատութեան դէմ մղւում է սկզբից ի վեր, նա առանձին ուժ ստացաւ վերջին երկու ամսայ ընթացքում։ Դումայի „կրիզ“ էր և մթնոլորտը տոգորւել էր „պետական հարւածի“ յամառ շշուկներով։ Սև-հարիւրակեան աջակողմը, մեծ իշխանները և Պետական Խորհրդի մի մասը յանձին դաւաճան Վիտէների որոշել էին տապալել Ստոլիպինին և նորէն ասպարէզ կոչել տխրահռչակ Գօրեմիկինին, որ դիւրութեամբ կարող էր մաքրել հաշիւները Դումայի հետ։ Վերջինը քէֆարկել էր մի „ըմբոստ բէֆօրմ“։ Նա որոշել էր Ստոլիպինի համաձայնութեամբ ստեղծել նաւատորմի նոր ընդհանուր սպայակոյտ։ Բախտի մի շար հեգնութեամբ Ռուսաստանի յեղափոխութեան դահիճ Ստոլիպինը յայտնւում էր թշնամի բէկցիայի և բարեկամ առաջադիմութեան... Բէկցիան այնուամենայնիւ տապալելով հանդերձ նոր բէֆօրմը, ի վերջոյ, պահեց առաջին մինիստրին, խորհելով անշուշտ, որ „պետական հարւածը“ դեռ վաղաժամ է և որ Ստոլիպին պիտանի ուժ է յեղափոխական համաձայնակի դէմ։

„Սև Դումման“ աւելի ևս յանդուգն եղաւ հնածէս։ Նեղի դաւանաղատութեան նշանաւոր խնդրում։ Զայնից պատկառելի մեծամասնութեամբ նա որոշեց լիակատար ազատութիւն տալ Ռուսաստանի տասնեակ միլիոնաւոր ազանդին, ներիրագործել պետական օրէնքով նրա դոյութիւնը և վերացնել նրա ազատ պրոպագանդի ու տարածման դէմ յարուցած բոլոր արգելքները։ Որքան և այդ կարևոր որոշումը պայմանաւորւած լինի նեղ, շահախնդիր, հատուածային միտումներով—նա մնում է այնուամենայնիւ, մի նշանակալի իրողութիւն, որի շուրջը միացել էին իրարու հակամարտ կուսակցութիւնները՝ սոցիալիստից մինչև հոկտեմբերեան կենտրոն։ Նշանակալի մանաւանդ այն պատճառով՝ որ հոկտեմբեան պահպանողական մեծամասնութիւնը յանկարծ թեքւում էր դէպի ձախ և դրանով իսկ ազդարարում էր Պետերհոֆի կամարիլլային, որ անգամ երրորդ Դուման, որքան էլ նա պահպանողական լինի, հնազանդ, անգոյն թոյլ չի տայ հին բէժիմի ու Գօրեմեկինների վերադարձը։

Այո, նա դարձեալ շարժւում է՝ շղթայակապ վիթխարին և բէկցիայի բոլոր ճիգերը՝ խորասուզելու նրան լեթարգիական մրափի մէջ—օդն են ցնդում։

„Անդորրացումը“ շուտաքայլ չի գնում, չը նայած պաշտօնական յաճախակի ծանուցումներին։ Ի՞նչ անդորրացում է դա, որ կատարւում է սուիններով, կախաղաններով և զինուորական դատարանների յաւիտենական ժխորի մէջ։ Ի՞նչ խաղաղութիւն է դա, որ գոռում է անգամ հայոց կաթողիկոսի գալստեան առթիւ ծարքած ցոյցերից, որ գլխապատառ արշաւում է կովկասեան ազգերի համերաշխութեան երկչոտ փորձերի դէմ... Պետերբուրգում գրկաբաց ընդունելութիւն ու խոստումներ, իսկ Կովկասում... այնտեղ նոյնիսկ չի թոյլատրւում վրացական ազնւականութեան պարզ յարգանքի արտայայտութիւնը կաթողիկոսին, այնտեղ ազատամիտ փոխարքայի հրահանգով արգելք է դրւում նոյնիսկ

քաղաքային դումային՝ ընդառաջ դնալ հայ ժողովրդի հոգևոր ներկայացուցչին։

Երբ հարկաւոր է կուսացնել ազգերը, Ղօրօնցօվ-Դաշկովի կառավարութիւնը չի խնայում եռանդ ու ջանք,—այժմ նա նոյն եռանդն է ի գործ դնում խեղդելու համերաշխութեան ամեն մի արտայայտութիւն, որ երկարաւև մղձաւանջից, եղբայրադաւ փորձութիւններից ու արհաւիրքներից յետոյ, սկսում է այժմ մերթ ընդ մերթ ճառագայթել կովկասեան հօրիզոններում՝ հայի, վրացու, թուրքի միջև։

Պատրանքները փարատւում են և Ղօրօնցօվեան բէժիմը, որ մեր քծնող ու տիրացուական լիբերալիզմի ստորաքարշ շահատակութիւններից քաջալերուած, բանտ է նետել ամբողջ հայ ինտելիգենցիան, այսօր աւելի դէմօնստրատիվ ծանուցանում է իր կատաղեալ համերաշխութիւնը համաուսական, պուրիշկեվիչեան բանակի հետ...

Ա Զ Ե Ֆ II

Նա դերազանցեց Ազեֆ-առաջնին... Աւելի հոյակապ ոսանդալ աշխարհը չի տեսել։ Բուրցեվ, հին, մոռացած յեղափոխականը, աքանչելի համութեամբ է կատարում իր խուզարկու դերը։ Նա մերկացրեց Ազեֆին և փրկեց սոցիալիստական կազմակերպութիւնը այդ անօրինակ դաւաճանից։ Նա այժմ պատուեց դիմակը աւելի խոշոր ամանպրովոկատորի՝ Հարտինդ-Լանդեսէնի և ազատեց Ֆրանսիայի մայրաքաղաքը—յաւանք ընդմիշտ—ռուս պոլիցիական շահատակութիւններից։

Անլսելի ու աղազակալ դայթակղութիւն։ Ահա մի մարդ, մի հզօր ու ազդեցիկ ատորապ, որ հանդիսանում է ցարի լաւագոյն թիկնապահներից մին, որ հոգում է Նիկոլայ II-ի անձնական ապահովութեան մասին, նրա եւրոպական ուղևորութիւնների ընթացքում, որ հսկում է բովանդակ Եւրոպայում ռուսաստանցի յեղափոխականների վրայ, որ հաստատուած է ցարի հրահանգով Պարիզի մէջ, որ վայելում է ռուս դեսպանատան մտերմութիւնը, ունի կապեր ու բարեկամութիւններ նոյնիսկ ֆրանսիական բարձրագոյն հասարակութեան մէջ, ունի վերջապէս պատուոյ լեժիոնի շքանշան... և ոմն է, ապերախտ... մի նախկին սոճրագործ, մի դեռեֆիկ լրտես ու agent-provocateur, դատապարտուած դեռ 1890 թուին նոյնիսկ ֆրանսիական դատարանից...

Նպատակ դնելով հալածել Ռուսաստանի յեղափոխականներին, կասկածելի ու վտանգաւոր դարձնել նրանց եւրոպացիների աչքում և փակել տալ փախստական դրծիչների առջև ազատ Եւրոպայի դռները, ցարիզմի այդ նզովեալ սպասաւորը դիմում է ամեն տեղ, Ֆրանսիայում, Շուէյցարիայում, բոլոր հնարաւոր միջոցներին. ապստամբ է ձևանում, մտնում յեղափոխական շրջանների մէջ, հրապուրում անփորձ երիտասարդներին, ձեռնարկում նրանց հետ պայթուցիկների ու այլ դաւաղրական ձեռնարկների պատրաստութեան։ 1890-ին բռնւում է Պարիզում, դատապարտւում մի շարք անմեղների հետ, բայց շուտով ինքը միայն արձակւում... Պետերբուրգի ամենակարող միջամտութեամբ։ Անցնում են տարիներ—և ահա նախկին դատապարտեալ Լանդեսէն, զինուած ցարական հովանաւորութեամբ, նորէն լոյս է ընկնում Պարիզում—արդէն Հարտինդ անունով—և վերսկսում է իր լրտեսական ու դրդռողական շահատակութիւնները։

Բուրցեվի ծուզակն ընկաւ։ Հրապարակը թնդաց այդ ահաւոր դայթակղութեան աղաղակից։ Ամբողջ Ֆրանսիան էր, որ խայթուած իր ազգային ինքնասիրութեան մէջ, պահանջեց վերջ դնել իր ամօթալի ճորտութեան, իր դաշնակցի վարկաբեկիչ, անպատուաբեր արարքներին։ Սոցիալիստները դարձեալ առաջապահն եղան այդ հրահանգիչ պայքարի, որ սկսւեցաւ պէս յաղթանակով։ Ժօրէսի հարցապնդման վրայ, մինիստր-նախագահ Կլեմանսօ յայտարարեց, որ ֆրանսիական կառավարութիւնը որոշած է այլ ևս չը հանդուրժել օտար ոստիկանութիւնների դոյութիւնը Ֆրանսիայում։ Եւ ամբողջ պարլամենտը ձեռնամբարձ դրատեց այդ առնական որոշումը։

Հեռագիրը ծանուցանում է, որ անդլիական պարլամենտում ևս սոցիալիստները մտադիր են պահանջել կառավարութիւնից՝ դուրս քշել անդլիական հողից ռուս ոստիկանլրտեսների վոհմակները...

ՍՕՑ.-ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ V ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ընդհանուր ժողովը անհնարին լինելով ներկայ պայմաններում, ռուս սոցիալիստ-յեղափոխականները գումարեցին նորերս կուսակցութեան Խորհուրդ։ Զբաղմունքի նիւթը ահագին էր։ Հարկաւոր էր շոկել—որքան այդ հնարաւոր էր—Ազեֆի դաւաճանութեան հետևանք-աւերածը։ Եւ այդ ուղղութեամբ Խորհուրդը ընդունեց մի շարք ծանրակշիռ որոշումներ։ Նա ընդունեց հին կենտրօնի հրաժարականը։ Նա նշանակեց յատուկ քննիչ յանձնաժողով՝ որոշելու համար բոլոր պատասխանատուութիւնները Ազեվեան գործի մէջ։ Նա ընտրեց նոր կենտրօնական կոմիտէ։ Նա ձևակերպեց, վերջապէս, մի շարք կարևոր որոշումներ կազմակերպութեան ու տակտիկի նկատմամբ։ Տերրօրային, ահաբեկչական գործունէութիւնը մնում է ըստ առաջնոյն կուսակցութեան պայքարի հիմնական մեթօդներից մին։ Ահա թէ ինչ է ասում այդ առթիւ Էս-Էր-ական Խորհուրդի վերջին ծանուցումը.

„Մեր կուսակցութեան վրայ ներկայ շրջանում ընկած են ահագին ու դժուարին պարտաւորութիւններ։ Նա միշտ հրապարակ է նետել, իբրև առաջապահ գործօն կուժ։ Նա առաջինը զէնք բարձրացրեց—ուղղակի յարձակման համար—այն ժամանակ, երբ ժողովրդական կեանքի խորքում հասունանում էին այնպիսի ուժեր, որոնք պատրաստ էին արձագանք տալ ռազմի կոչին ու օրինակին։ Բայց ներքին տագնապը այժմ ևս չէ կարող ստիպել նրան՝ վար դնելու զէնքը։ Ազեֆի մասնակցութիւնը տերրօրական մի շարք գործողութիւնների մէջ չը վարկաբեկեց և չէր կարող վարկաբեկել կուսակցութեան աչքում կուժի այդ մեթօդը։ Որքան աւելի էր պարզւում գործի փաստային կողմը, այնքան աւելի և աւելի կուսակցութեան յուղած գիտակցութիւնը գալիս էր—այն անտարակուսելի եզրակացութեան՝ որ, թէև արկածախնդիր-պրովոկատորի մասնակցութիւնը արգելք չի եղել առանձին խոշոր յաղթանակներին տերրօրի աշխարհում, բայց նա թուլացրել, ուժասպառ է արել ահաբեկչական գործողութիւնը կառավարութեան ու յեղափոխութեան համար վճռական շրջաններում։ Ազեֆի մասնակցութիւնը չի թոյլ տուել, որ կուժի այդ մեթօդը արտայայտուի իր բովանդակ ուժով, չի թոյլ տուել, որ արտայայտուի նաև այն բովանդակ կորովը, որ կուսակցութիւնը կարող էր զարգացնել, այդ մեթօդը օգտագործելով։ Ազեֆի մասնակցութիւնը ուժ է տուել կառավարութեան ինքնապահովութեան զգացումին, թափ է հաղորդել նրա վճռականութեանը հէնց այն վայրքարի, որ սկսւեցաւ պէս յաղթանակով։ Ժօրէսի հարցապնդման վրայ, մինիստր-նախագահ Կլեմանսօ յայտարարեց, որ ֆրանսիական կառավարութիւնը որոշած է այլ ևս չը հանդուրժել օտար ոստիկանութիւնների դոյութիւնը Ֆրանսիայում։ Եւ ամբողջ պարլամենտը ձեռնամբարձ դրատեց այդ առնական որոշումը։

Հեռագիրը ծանուցանում է, որ անդլիական պարլամենտում ևս սոցիալիստները մտադիր են պահանջել կառավարութիւնից՝ դուրս քշել անդլիական հողից ռուս ոստիկանլրտեսների վոհմակները...

կեանքերում, երբ կառավարութիւնը ամենից աւելի պէտք է ունեցել այդ վճռականութեան։ Եւ եթէ ազգ-վեան պրոփոկատորութեան յայտնագործումը մի քանի առանձին անհատների մէջ հիասթափութիւն է առաջացրել դէպի տերրորիզմը,—ապա կուսակցութիւնը իր ամբողջութեամբ, իր ճնշող մեծամասնութեամբ՝ Ազգվի անակնկալի մէջ գտել է միայն պատասխանը այն հարցին՝ թէ ինչո՞ւ տերրորը չը տուեց Կուսակցութեանն ու Յեղափոխութեանը այն բոլորը, ինչ որ նա կարող էր տալ և ինչ որ նա կը տայ իր վերածնունդին։ Այդ խնդրի մէջ կուսակցութիւնը մնաց իր հին, մարտական դիրքում"։

ԹԻՒՐՔԻԱ

ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՆԻՍՏ

ԻՆՏԵՐՆԱՑԻՕՆԱԼԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

„Անցեալ or միքինկ մը տեղի ունեցաւ Սալոնիկի մէջ, բողոքելու համար այս (սինդիկատային) օրինագծին դէմ. ներկայ rոպէին մեր երկիրը պէտք չունի ատանկ բաներու"։

Այդպէս յայտարարեց ներքին գործերի մինիստր Ֆերիդ փաշա՝ գործադուլների և սինդիկատների օրինագծի շուրջը տեղի ունեցած պատմական վիճաբանութիւնների ընթացքում։

Նոյնը շեշտեց հանրօգուտ աշխատանքների մինիստրութեան ներկայացուցիչ Ալի բէյ, նոյնը հաստատեց պարլամենտի երամական մեծամասնութիւնը... Եւ օրինագիծը տապալուեց։ Գումարումների և ընկերակցութիւնների ազատութիւնը (liberté de l'association), որ սահմանադրական կեանքի ամենաէական յատկանիշն է, մահացու հարուած ստացաւ։ Մամուլի ազատութիւնը անգթօրէն մկրատելուց յետոյ, հօջաների և նորատեաց Ֆերիդականների երամը խողխողեց նաև գործադուլի ու ընկերակցութեան իրաւունքը։

Եւ այդ բոլորը կատարուեց մի չափազանց օրիժինալ ձևով, որ բաւական զւարճալի կը լինէր, եթէ չը լինէր ողբալի։ „Ազատ Թիւրքիայի" այդ տենդային ճճապարանքը՝ խեղդելու ամեն ինչ, որ հեռաւոր առնչութիւն ունի սոցիալիստական պրոպագանդի հետ, փակելու բոլոր դռները ժամանակակից գաղափարների ու հոսանքների առջև—յարուցանում է արդէն զարմանքի անհանգիստ ժեստեր Եւրոպայի լաւատես շրջաններում։ Իսկ Բրիւսելի միջազգային Սոցիալիստական Բիւրոյին, խնդրելով ընդունել տալ զինքը միջազգային սոցիալիստական գերդաստանի մէջ։ Այդ նոյն դաշնակցութիւնն է, որ բողոքել է սինդիկատային օրինագծի դէմ և որի առթիւ ցասում է յայտնում Ֆերիդ փաշան պարլամենտի մէջ։

Սալոնիկի բանւորական դաշնակցութիւնը հաղորդում է սոցիալիստական Բիւրոյին իր նոր գումարած միթինգի մասին, որին մասնակցել են 6000-ի չափ աշխատաւորներ այլ և այլ ազգութիւններից և արհեստներից։ Նա հաղորդում է, որ մտադիր է կազմակերպել բովանդակ Թիւրքիայի հարստահարած բանւորութիւնը, առանց խտրութեան ազգի ու կրօնի։ Նա կը կազմէ և սինդիկատներ, կը վարէ գործադուլներ այլևայլ ճիւղերում։ Նա ունի արդէն իր հրատարակութիւնները և պիտի տարածէ գրչով ու խօսքով սոցիալիզմի ու միջազգային համերաշխութեան մեծ գաղափարը։

Ի սրտէ ողջունում ենք այդ նոր երևոյթը, որ գալիս է քաջալերելու Թիւրքիոյ առաջադիմութեան բոլոր անկեղծ բարեկամներին։ Ինչպէս յայտնի է, մինչև օրս Հ. Յ. Դաշնակցութիւնը միակ կազմակերպութիւնն է Տաճկաստանում, որ ունի ուրոյն ներկայացուցչութեան իրաւունք։ Զոհրաբ հեգնեց կառավարութեան ներկայացուցչի միամիտ յայտարարութիւնը, թէ „պէտք է աշխատիլ հաշտեցնել դրամագլուխն ու աշխատանքը"։

—„Գեղեցիկ երազ մըն է ատիկա, բայց երազ մը"։

Վարդգէս շօշափեց հիմնական վէրքը ժամանակակից հասարակական կազմակերպութեան.

—„Ֆերիդ փաշան ըսաւ, որ սինտիքաները դէմ են դրամագլխին. եթէ նոյնիսկ այդպէս ըլլայ, դարձեալ վնաս չունի, որովհետև գրամագլուխը կազմուած է աշխատաւորներու քրտինքով... Մեր կառավարութեան գլուխը կը գտնուին փաշաներ, փաշազատէներ և այլ հարուստ մարդիկ անոնք չէ, որ պիտի հասկնան բանւորին դրութիւնը։ Բանւորները իրենք են, որ պիտի պաշտպանեն իրենց իրաւունքները... Արգելել սէնտիքաները, կը նշանակէ կախել ազատութիւնը"...

Ի զուր. Այդ պերճախօս ըմբոստացումներին կառավարութիւնը հակադրում է պառաւ Եւրոպայի զառամեալ պոլիտիկոնների հին նէյնիմները.

— „Պէտք է արգելել դասակարգերի հակամարտութիւնը, պէտք է հաշտեցնել կապիտալն ու աշխատանքը, պէտք է դարձնել բանւորին ևս՝ դրամատէր"...

Իսկ ամենից ուշագրաւը Ֆերիդ փաշայի ցասկոտ դատավճիռն է.

—„Մեր երկիրը պէտք չունի ատանկ բաներու"...

Երկիրը, սակայն, բնաւ չի սպասում Ֆերիդ փաշաների ու Ալի բէյերի դեղատոմսին։ Նա գնում է այն ճանապարհով, որով քալել են ուրիշ, աւելի առաջադէմ երկրները։ Նա զարգանում է, առաջնորդուած նոյն օրէնքներից, որոնցով ղեկավարւում է բոլոր հասարակութիւնների էւոլիւցիան։

Եւ ահա դրա մի պերճախօս ապացոյցը մեր աչքի առջև։ Մեզ հաղորդում են հաստատ աղբիւրից, որ Յեղափոխութեան որբան—Սալոնիկում կազմակերպուել է բանւորական դաշնակցութիւն, որը արդէն դիմումն է արել Բրիւսելի Սոցիալիստական Բիւրոյին, խնդրելով ընդունել տալ զինքը միջազգային սոցիալիստական գերդաստանի մէջ։ Այդ նոյն դաշնակցութիւնն է, որ բողոքել է սինդիկատային օրինագծի դէմ և որի առթիւ ցասումն է յայտնում Ֆերիդ փաշան պարլամենտի մէջ։

Սալոնիկի բանւորական դաշնակցութիւնը հաղորդում է սոցիալիստական Բիւրոյին իր նոր գումարած միթինգի մասին, որին մասնակցել են 6000-ի չափ աշխատաւորներ այլ և այլ ազգութիւններից և արհեստներից։ Նա հաղորդում է, որ մտադիր է կազմակերպել բովանդակ Թիւրքիայի հարստահարած բանւորութիւնը, առանց խտրութեան ազգի ու կրօնի։ Նա կը կազմէ և սինդիկատներ, կը վարէ գործադուլներ այլևայլ ճիւղերում։ Նա ունի արդէն իր հրատարակութիւնները և պիտի տարածէ գրչով ու խօսքով սոցիալիզմի ու միջազգային համերաշխութեան մեծ գաղափարը։

Ի սրտէ ողջունում ենք այդ նոր երևոյթը, որ գալիս է քաջալերելու Թիւրքիոյ առաջադիմութեան բոլոր անկեղծ բարեկամներին։ Ինչպէս յայտնի է, մինչև օրս Հ. Յ. Դաշնակցութիւնը միակ կազմակերպութիւնն է Տաճկաստանում, որ ունի ուրոյն ներկայացուցչութեան իրա-

ւունք Ինտերնացիոնալի, այսինքն միջազգային ընկերվարական Դաշնակցութեան մէջ։ Դեռ անցեալ հոկտեմբերին, երբ նրա պատիրակը ողջունում էր այդ Ինտերնացիոնալը Բրիւսէլում գումարուած միջազգային միթինգի մէջ, միահամուռ բաղձանք յայտնուեց, որ Թիւրքիայի միւս ժողովուրդները ևս ըստ կարելւոյն շուտով գրկեն արևմտեան փրկարար վարդապետութեան դրօշակը։ Այսօր այդ բաղձանքն իրականանալու վրայ է կարծես։ Պատմական Սալոնիկը, յեղափոխութեան շեփորը հնչեցնելուց յետոյ, գալիս է այժմ հնչեցնելու սոցիալիզմի քարոզը։ Նա գալիս է պարլամենտի հայ առաջադէմ պատգամաւորների հետ ներդաշնակ իր բողոքն արտասանելու յետադէմ օրինագծերի առթիւ։ Ի՞նչ կարող է անել կառավարութիւնը նոր հոսանքի բարձրացող ալիքների դէմ։ Եթէ նա—համաձայն իր օրինագծին ու պատժական սպառնալիքներին — սկսէ արշաւանք բանւորական շարժման դէմ, ճնշէ բռնութեամբ գործադուլի ու սինդիկատի իրաւունքը,—սոցիալիստները պիտի դիմեն այն ժամանակ գաղտնի գործունէութեան... ինչպէս բռնապետական Ռուսաստանում։

Գաղափարը նետուած է արդէն։ Նա կը տարածուի ու կ'արգասաւորուի։ Մեր անվերապահ համակրանքն ենք յայտնում Սալոնիկի ու Մակեդոնիոյ նորաբողբոջ կազմակերպութիւններին և մեր անկեղծ պատրաստակամութիւնը՝ հերկելու մեկտեղ համերաշխ ճիգերով խոպան հողը։ Ցանկանք, որ աշխատաւորական կազմակերպութեան ցանցերը տարածուին մանաւանդ թիւրք ազգաբնակութեան մէջ, ցանկանք, որ զինուորագրուի մանաւանդ թիւրք առաջադէմ երիտասարդութիւնը։ Սոցիալիստական Ինտերնացիոնալի գաղափարը մէկն է—թերևս հզօրագոյնը—այն շաղախներից, որ պիտի մօտեցնէ բազմացեղ ու հակամարտ ժողովուրդներին, ի դէմս միջազգայնօրէն հարստահարուած ու շահերով ազգակից աշխատաւոր զանգուածների, և պիտի ստեղծէ ի վերջոյ կուռ, համերաշխ ամբողջական ցաճկաստանը...

ԿԻԼԻԿԵԱՆ ՍԱՐՍԱՓՆԵՐ

Ատանա, 13 յունիս

Քանի երկրի խորքերը կը մանեա այնքան պատկերը կը ծանրանայ և դէպքերը կը մեծնան։ Զոհերու թիւը 15 հազարէն աւելի կը լայ։ Սպաննուածներու ինը տասներորդը աշխատող՝ կտրիճ հասակի մէջ տղամարդիկ են, ամեն մէկը ամբողջ ընտանիքի մը նեցուկ։ Այս տարւոյ լաւ հունձքը, ճամբորդութեան ազատութիւնը և սովը Հայաստանի մէջ, այս կողմը նետած էր հայերու, ասորիներու ու քրդերու բազմութիւն մը։ Մօտաւոր հաշուով 100 քրիստոնեայ ագարակներէն իւրաքանչիւրին մէջ այս տարի կաշխատէր 100—300 քրիստոնեայ բանւոր։ 15,000 հնձւորներէն 10—12,000 ը հաշուելու է հայ (չհաշուած տեղացիները)։

Զինուորական ատեանը սկսեց իր քայլը սխալով։ Կախուած 6 հայերէն 3-ը, դէպքերու սկիզբէն եղած են ճեզուիթներու և բողոքականներու մօտ։ Ցանցանքի պարագային իսկ երեք եղբայրներու կախիլը չլսուած բան է, սա չափազանց է։ Եթէ զինուորական ատեանը այսպիսի „անաչառութիւն" ցոյց տայ առհասարակ, պէտք է առնուազն 10—12,000 մահմեդական կախուի։ Մեղքը քիչ ալ նախկին նախաքննութիւն կատարող յանձնաժողովինն է, որ բոլորովին անվստահելի կազմ ունէր։ Ցամենայն դէպս մինչև որ չբլլան բաւական թիւով նախաքննիչ ատեաններ խառն տարրերէ բաղկացած, դժուար է արդարութիւնը վերականգնել։ Թալանողներէն, կողոպտողներէն պահանջելու է ինքնները. արժէքաւոր բաները ծախուած, թաղուած են։

Գործի դեռ սկիզբն է. դժուար է գուշակել արդեօք միմիայն մահմեդականներէ բաղկացած ատեանը պիտի կրնայ ցոյց տալ անհրաժեշտ անաչառութիւնը։ Դեռ քիչ սպասելու է։

ՓՈՔՐ-ՀԱՅՔԻ ՀԱՅԵՐԸ

II

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Գիւղական կեանքի տնտեսական մահմերձ վիճակը, գիւղացիական հմայանքներու անտեսական գրութեան քայքայումը, ինչպէս ամենուրեք, նոյնպէս և այս շրջանին մէջ ունեցած է իր սկայ ազդեցութիւնը քաղաքի աղգաբնակչութեան վրայ։

Պատճառի և արդիւնքի հետևողականութեան տրամաբանութիւնը այս պարագային շատ պարզ է։ Գիւղը աղքատանալով, արտերը անաշխատ մնալով, ցորենը նշաղելով, ուտեստի-հացի գինը բնականօրէն բարձրացած է նաև քաղաքներուն մէջ և մանր արհեստաւորութիւնը ու բոլորովին սեփականատուրկ աշխատաւորութիւնը իրենց կարգին բռնուած են անօթի մնալու սարսափէն։ Եւ ալ կարգին եաթը բազմանդամ ընտանիքներ—որովհետև թիւրանկէ եաթը բազմանդամ ընտանիքները միշտ քիոյ բոլոր՝ բայց մանաւանդ հայ ընտանիքները միշտ բազմանդամ են (տասը, քսան, երբեմն 30 հոգի մէկ տան մէջ)—բաւականաչափ հաց գտնելու համար ստիպուած են այր թէ կին, չափահաս թէ անչափահաս, բոլորը միասին դուրս թափիլ աշխատանք փնտռելու։ Ասանկով այստեղ ալ, ինչպէս ամենուրեք, աշխատող ձեռքերու մատուցումը աւելնալով, անոնց արժէքը, օրավարձը կամ կապալով գործերու աշխատավարձը նուազած է։

Եւ հիմա կը տեսնենք տնտեսական խղճալի գրութիւն մը Փոքր-Հայքի գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ ալ։

Մանր արհեստաւորութիւնը, դարձեալ կերպով մը կը քաշկռտէ իր գոյութիւնը, որովհետև ինչ ինչ ճիւղերու համար տակաւին չէ ստեղծուած այս կոչմները ճարտարարեստ (La grande industrie) ըսուածը,—այսպէս են մանուսայագործները, կտաւագործները, կահագործները, կօշկակարները, դերձակները, երկաթագործները, մսավաճառները, շրջիկ վերեզակները և այլն։ Թէև ան կարգի աշխատաւորութեան համար ալ ապագան բոլորովին սև է և յուսահատական, քանի որ արդէն իսկ կապիտալիզմը գանոնք ալ ոչնչացնելու, գանոնք ալ „պրոլետարացնելու" իր գործը սկսած է ու կը շարունակէ ոչ միայն եռանդով, այլ և յաջողութեամբ։ Օրինակի համար, մինչդեռ սկիզբները կահագործ մը ինք կ'աշխատէր իր խանութին մէջ ամենաշատը մէկ կամ երկու օգնականներով ու կը վայելէր իր աշխատանքի արդիւնքը, հիմա կը տեսնուի արդէն որ քիչ շատ դրամ ունեցող վարպետ կահագործ մը կը սկսի օրավարձով աշխատցնել մէկ քանի արհեստաւորներ և անոնց աշխատութեան արդիւնքը վայելել։ Ու այս երեւոյթը կը տեսնուի միւս բոլոր արհեստներուն մէջ ալ առաւել կամ նուազ չափով։

Սա արդէն սկզբնաւորութիւնն է վերջին, այսինքն սկիզբն է մանր արհեստաւորութեան հոգեւարքին և այսուհետև ձեռք բերած քիչ թէ շատ քաղաքական ազատութեան շնորհիւ նա հետզհետէ աւելի պիտի զարգանայ և պիտի ջնջէ անշուշտ մանր արհեստաւորութիւնը այժմու փոքրիկ „մասնաւոր" աշխատանոցները վերածելով կապիտալիստական խոշոր ձեռնարկներու։

Կտաւագործութիւնը որ այս շրջանին մէջ բաւական շահաբեր աշխատութիւն մըն էր արհեստաւորութեան համար, ասկէ առաջ, երբ սա ինք կ'արտադրէր և ինք

կը վաճառէր, հիմա արդէն սկսած է նեպլիզ ճիշտ այն համեմատութեամբ, որով սկսած են շատնալ ուրիշներուն օրավարձով կամ՝ կապալով կտաւ գործել տուող և վաճառողները։

Այսքան մէկ-երկու հարեւանցի խօսք անցնելու, իմնալու վրայ եղող մանր արհեստաւորութեան մասին ըսելէ յետոյ, մենք կ'անցնինք արդէն բուն ցաւին, իսկական պրոլետարիային, քանի որ ոչ միայն նա գոյութիւն ունի այս շրջանին մէջ իր իսկական առումով, այլ նաև անոր համար որ, ոչ շատ հեռաւոր ապագայի մէջ միւսներուն ալ հանդուրան դրութիւնը պիտի ըլլայ նոյնը։

Փոքր Հայքի մէջ կայ ըսի իսկական պրոլետարիա,—սեփականազուրկ բանւորութիւն, որովհետև կայ նաև համեմատաբար մեծ ճարտարարուեստ ինչ ինչ ճիւղերու համար։—Ամասիոյ մէջ կան ալիւրի մեծ գործարաններ և մետաքսի և խոզակի մէկ քանի գործարաններ, Մարզուանի մէջ՝ կտաւի բազմաթիւ գործարաններ, Թոքատի մէջ՝ բազմաթիւ գործարաններ եղեմի և տպածոյի, ինչպէս նաև պղնձի հալոցներ ու պղնձագործութեան մեծ աշխատանոցներ, Սեբաստիոյ մէջ՝ մեծ գործարաններ գորգաշինութեան, Խարբերդի մէջ՝ մետաքսի գործարաններ և երկաթի ձուլարան մը, Արաբկիրի մէջ՝ մանուսագործութեան աշխատանոցներ, և այս՝ ինչպէս որակեցի ես զանոնք՝ համեմատաբար „մեծ" ճարտարարուեստը սեփականազուրկ աշխատաւոր դարձուցած է մօտ 2500 հոգի, որոնց առնւազն հարիւրին 60 ը կին։

Ա՛լ տուներուն մէջ ոչ ոք չէ մնացած, բացի ծեր և պառաւ անկարողներէն, միւսները բոլորը կ'աշխատին։ Առանց չափազանցութեան պէտք է ըսել, որ 3—4 տարեկան փոքրիկ աղջիկներ արդէն քաշած են գորգաշինութեան կամ մանուսայագործութեան „թէզկեահին" տակ և երբ խեղճ երեխաները սարսափած երկարաւ աշխատանքէն, պարտասանքէն, երբեմն առաւօտները կը մերժեն երթալ „ֆապրիգա", որ գիշերը կ'երևայ իրենց աչքին կան մասնաւոր անձեր, յաճախ տարիքոտ կիներ կամ մանաւանդ քահանաներ, որոնք շաբաթեղէններով կը խրախուսեն զանոնք դէպի խամրեցուցիչ „թէզկեահը"։

Փոքր-Հայքի սիրան է Սեբաստիան և տնտեսական պայքարի պահանջ մը այնքան ուժեղ, որքան եւրոպական ճարտարարուեստի մեծ կեդրոններուն մէջ, կըզգացվի այստեղ։ Ամենէն աւելի գործարաններ այստեղ կան և հետևաբար նաև ամենէն շատ պրոլետար այստեղ գոյութիւն ունի, դրութիւն մը արժանի հետաքրքրութեան և որ պարզելով կարող է ինք իրմէ պատկերը ներկայանալ նաև միւս քաղաքներու բանւորական կացութեան։

Սեբաստիոյ մէջ ինչպէս ըսի տիրապետող ճարտարարուեստը գորգաշինութիւնն է։ Այստեղ գոյութիւն ունին 10—11 ֆիրմաներ 2000 էն 30—40,000 օսմ. ոսկի դրամագլուխով, որոնք կը բանեցնեն 30 ի չափ գորգի աշխատանոցներ, արտադրելով մեծ մասամբ շքեղանքի (luxe) առարկաներ, յաճախ գեղարուեստական ու շատ ճաշակաւոր, և յատկացած արտածութեան՝ դէպի Ճոխութեան ու հարստութեան կեդրոններ, Եգիպտոս, Եւրոպա և Ամերիկա։

Այս երեսուն գործարաններուն մէջ կ'աշխատին 3000—3500 բանւորուհիներ, բոլորը մանկամարդ աղջիկներ, ամուսնացած կիներու աշխատանքը տան վերապահած ըլլալով, և մեծամասնութեամբ Հայ։ Թիւրք աղջիկներ նոր սկսած են իմնալ գործատուն և տակաւին նշանակելի թիւ մը չեն կազմեր։

Այս բանւորուհիներու կեանքին վերլուծումը կը բաւէ ապացուցանելու համար տնտեսական ցաւին խորութեան աճաւորութիւնը մեր ընտանիքին այս բաժնին մէջ։ Բանւորուհիները, ինչպէս՝ քիչ վերը ըսի, արդէն իրենց 3—4 տարեկան եղած ժամանակէն սկսելով կը յանձնուին գործատուն իրենց ծնողքին և ուրիշ ազդեցիկ անձերու կողմէ հարար համոզիչ խօսքերով և անոնց երեխայական հոգին ծաղիկներով կամ քաղցրաւենիներով խաբելով։ Երեք-չորս տարեկան աղջիկը նախ ամիս մը օրական 12—12 ժամ կ'աշխատի ձրի, որպէսզի սորվի ծառայել և յետոյ վարժուի գործատան միջավայրին։ այդ մէկ ամիսուան շրջանին, որուն շատ անգամ անունը միայն մէկ ամիս ըլլալով, յաճախ, ըստ գործարանատիրոջ քմահաճոյքին, կրնայ մինչև երեք ամիս երկարիլ, փոքրիկ գործաւորուհին առանց չունենալով ուտելիք, կ'ապրի իրմէ մեծ բանւորուհիներու չոր հացին աւելցուքներովը։ Քիչ մը ժամանակ անցնելէ յետոյ դրութիւնը կը փոխուի, „սկսնակ օգնականը" կը բարձրանայ արդէն „օգնական բանւորուհիի" վիճակին և կրկին ստանալ օրական 10 փարա (5 սանտիմ) աշխատավարձ միշտ առնւազն 10—12 ժամեան աշխատանքի համար։ Իսկ քիչ մը ալ յետոյ, երբ նա արդէն 6—7—8 տարեկան ըլլայ ու սկսի ուղղակի մասնակցութիւն ունենալ գործը տիրելու գործին մէջ, իր օրավարձն ալ կը բարձրանայ 10—15—20 կամ մաքսիմում 30 փարայ։ բայց այդ ժամանակ արդէն իր աշխատանքը շատ ծանր է, մանաւանդ որ խեղճ աղջիկը ստիպուած է այդ շրջանին ամենէն աւելի ուշադրութեամբ և արագութեամբ հետևիլ „վարպետ բանւորուհիին" աշխատութեան եղանակին և արտադրած գործին, որպէսզի ինքն ալ օր առաջ կարենայ հասնիլ նոյն „ցանկալի" դիրքին։ Գործարանատէրն ալ միշտ կը խրախուսէ բանւորուհին այս շրջանին մէջ գտնուած ժամանակ, որպէսզի նա սիրով և „հոգւով-մարմնով" աշխատելով կարելի եղածին չափ շուտով դառնայ „վարպետ", բան մը, որմէ ինք շահեր կ'ակնկալէ.—վարպետ բանւորուհիներու թիւը շատնալով, մատուցումն ալ կը շատնայ և վարձատրութիւնը կարելի կ'ըլլայ նուազեցնել։

(Շարունակելի)

ԲԱՂԱՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿՆՃԻՌՆԵՐ

I

ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ

—

Ասել էին՝ 19-ՐԴ դարը ազգայնական խնդրի դարն է, 20-ՐԴԸ պիտի լինի սոցիալական խնդրի դարը։ Մէկ կնճիռը պիտի սպառուէր—այդ մարդարէութեան համաձայն—և պիտի տեղի տար միւսին։

Այդպէս չ'եղաւ սակայն։ 19-ՐԴ դարը չը սպառեց ազգայնական պրոբլեմը, նա չը լուծեց ազգերի դրութեան ու փոխադարձ յարաբերութեան մեծ հանգոյցը և բազմաթիւ բարդ կնճիռներ ժառանգեց իր յաջորդին։

Չ'իրագործուեց մարգարէութիւնը և այն մի կարգ հասարակական վերանորոգիչների՝ որոնք գրչի մի շարժումով, դեռ անցեալ դարու քառասնական թուականներին, ջնջել ուզեցին ազգ ու ազգային հարց համաշխարհային էվոլիւցիայի քարտէզից և հրաչակեցին ազգերի ձուլումը մօտ ապագայում՝ կոմունիստական, համայնատիրական կարգերի մէջ...

Ազգային գիտակցութիւնը շեշտւում է այսօր քաղաքակրթուած ու կիսակիրթ երկրագնդի բոլոր ծայրերում և ինքը սոցիալիստական ինտերնացիոնալը, որ երբեմն թեթև սրտով արհամարհում էր հասարակական այդ աճագին գործօնի դերը, վերածելով այն՝ լոկ տնտեսական, արդիւնաբերական յարաբերութիւնների—այսօր ստիպուած է միշտ աւելի և աւելի զբաղուել նրանով։

Ազգերի հակամարտութիւնը չի վերանում, անգամ այնպիսի երկրներում—Գերմանիա, Աւստրիա, Ռուսաստան—ուր միջազգային սոցիալիզմը նեռաճել է միլիոնաւոր կողմնակիցներ, աշխատաւոր, մտաւորական ու այլ

դասակարգերից։ Աւստրիա և Ռուսաստան այն պետութիւններն էին, ուր ազգային հարցը ներքին քաղաքականութեան դժուարագոյն կնճիռն է, այսօր նրանց աւելանում է ազատագրուած Տաճկաստանը, ուր մինչև օրս ազգերի ու դասակարգերի ներհակութիւնները արհեստականօրէն խեղդուած էին քաղաքական բռնակալութեան լծի տակ, իսկ այժմ ահա ծաւալւում են իրենց բովանդակ ուժով ու կատաղութեամբ։

Հակամարտութիւնը չի վերանում, տեղ-տեղ նոյնիսկ թափ է առնում, սպառնալով վերսկսել այն արիւնոտ ու խոլական բաղխումների շարանը, որ անցնում է կարմիր գծով ամբողջ 19-րդ դարի միջից...

Անշուշտ, քաղաքակրթութեան և համաշխարհային էւոլիւցիայի հիմնական ձգտումը մնում է անդրդեւելի։ Նա տանում է ոլոր-մոլոր շաւիղներով դէպի իդեալական այն վիճակը, ուր պիտի մարին վերջնականապէս մարդկութիւնը պատառոտող անջատողական ախորժակները, ուր ոչ միայն իւրաքանչիւր ազգի բոլոր անդամները պիտի վայելեն լիակատար իրաւահաւասարութիւն, ազատութիւն ու բարօրութիւն, այլ և բոլոր ազգերը պիտի վայելեն նոյն բարօրութիւնն ու իրաւահաւասարութիւնը՝ միևնոյն ընդհանուր, համամարդկային գերդաստանի մէջ։ Նա տանում է դէպի այն ճշմարիտ „ոսկէ դարը"—որ անցեալում չը պէտք է փնտրել այլ ապագայում—որին ձգտել են մարդկութեան լաւագոյն զաւակները յընթացս ամբողջ տիեզերական պատմութեան և որի գրկում ազատութեան ու հաւասարութեան գաղափարները պիտի դառնան անկասելի սեփականութիւն այն բոլոր էակների—այսօր խուժդուժ, վայրենի ու բարբարոս—որոնք մարդկային կերպարանք ունին...

Այդպէս է հրահանգում պրոգրէսի, առաջադիմութեան մեծ օրէնքը, որ անժխտելի կերպով հաստատուած է պատմութեան փիլիսոփայութեան մէջ։ այդպէս է մարդկային բովանդակ զարգացման ու ատիճանական կատարելագործման նպատակը։

Աւա՜ղ, սարսափելի է զարգացման այդ ճանապարհը, ցանած ծայրէ-ծայր արիւնով ու արտասուքով... Երկու յարակից տիեզերական ուժերը այդտեղ ևս գործում են մշտնջենաւոր մրցութեան մէջ։ Ձգողութիւն և վանողութիւն (attraction—répulsion), կամ սոցիոլոգիական բարբառով՝ համերաշխութիւն և կռիւ։ Այդ երկու հակոտնեաները վարում են ամբողջ օրգանաւոր և անօրգան տիեզերքի ճակատագիրը. նրանց օրէնքին ենթարկւում է անասնական աշխարհի էւոլիւցիան, նրանցով ղեկավարւում է և մարդկային համայնքների ու նրանց փոխադարձ յարաբերութիւնների զարգացումը։

Մի կողմից կռիւ, միւս կողմից՝ համերաշխութիւն. համերաշխութիւն—յանուն կռիւ և դէպի կռիւ...

Անշունչ և անասնական տիեզերքում այդ երկու հակոտնեաները—ձգողութիւն և վանողութիւն—գործում են կոյր, անողոք, տարերային ճակատագրականութեամբ։ Ոչինչ չի կարող արգելել նրանց, փոխել, բարելաւել նրանց ընթացքը։ Գոյութեան կռիւը անասնական աշխարհում, չը նայած իր հակոտնեայ-համերաշխութեան ընդդէմ (որ շեշտւում է առանձին-առանձին տեսակների մէջ)՝ յաւիտենօրէն աւերիչ է, յաւիտենօրէն արիւնալի։ Նրա զոհերը—իբրև կոյր գործիքներ տիեզերական ազդակների—չեն կարող հակազդել դարվինական այդ անողորմ օրէնքի դէմ։ Բայց մարդկութիւնը անասնութիւն չէ։ Մարդիկ գիտակից էակներ են, որ կարող են միշտ միջամտել հասարակական, նոյնիսկ բնական ազդակների խաղերի մէջ և տալ նրանց իրենց շահերին նպաստաւոր ուղղութիւն։ Մարդիկ իրենք են առեղծում իրենց պատմութիւնը—հրահանգած յաճախ նոյն բնական ու հասարակական ազդակներից—իրենք են վարում իրենց ճակատագիրը և հետզհետէ զարգանալով ու կատարելագործւելով, այդ գիտակից, կամքով ու նախաձեռնութեամբ օժտուած էակները պիտի կարողանան ատիճանաբար մեղմել, թուլացնել հակոտնեաներից մէկի ուժը ի նպաստ միւսի, մեղմել „կռիւը", „վանողութիւնը" ի նպաստ „համերաշխութեան" կամ „ձգողութեան"։ Այդպէս է ընթանում մարդկային էւոլիւցիան, այդպէս էլ կ'ընթանայ նա, մինչև որ հասցնէ ազգերի ու անհատների լիակատար իրաւահաւասարութեան „ոսկէ դարին"։

Մինչ այն կռիւ է...

Արդարև, տեսէք ապշեցուցիչ հակօրինութիւնը ժամանակակից քաղաքակրթութեան։ Նրան իրաւամբ անուանել են կապիտալիստական, դրամատիրական քաղաքակրթութիւն։ Նրա մէջ գտնում ենք խոր ու ցայտուն երկուութիւն։ Նա մի կողմից սերտ կապերով շաղկապում է երկրագնդի բոլոր ծայրերի ազգութիւնները, հաղորդակից անելով նրանց նոյն զարգացած կապիտալիստական արդիւնաբերութեան և կուլտուրայի բարիքներին ու չարիքներին։ Բայց նա միւս կողմից և միաժամանակ խորունկ վերպով բաժանում է այդ ազգերին, թունաւորում է նրանց փոխադարձ յարաբերութիւնները, սերմանում է ատելութիւն, արիւնոտ մրցում և ձգտում է յաւերժացնել մարդասպան պատերազմների ժառանգները...

Տեսէք մի կողմից միջազգայնութեան, համաշխարհայնութեան (cosmopolitisme) այդ մեծ յորձանքը, որ կառուցանում է այնքան հոյակապ հաստատութիւններ—առևտրական, մաքսային ու այլ դաշինքներ, համաշխարհային փոստ-հեռագրական ընկերակցութիւն, համաշխարհային խաղաղութեան բիւրո, միջնորդ ու իրաւարար ատեաններ, գրականութեան ու մամուլի դաշնագրութիւններ և ամեն տեսակ միջազգային համագումարներ, կօնգրէսներ, որոնք բոլորն էլ, իբրև արդասիք կապիտալիստական դարաշրջանի, կոչուած են դիւրացնելու թէ նիւթական բարիքների և թէ մտքերի փոխանակութիւնը այլ և այլ ժողովուրդների միջև... Տեսէք, մանաւանդ, այդ նոր, վեհապանծ Ինտերնացիոնալը, միջազգային սոցիալիստական նոր մարդկութիւնը, որ բարձրանում է ժամանակակից աշխարհի մէջ, իբրև նոյնպէս հարազատ ծնունդ կապիտալիզմի, և որ ի մի ձուլելով բոլոր ազգերի աշխատաւոր զանգուածները, մարզելով նրանց համերաշխութեան ու եղբայրութեան դպրոցի մէջ, հրաշակերտում է վաղուան իդէալական հաւասարութեան թագաւորութիւնը։

Բայց և տեսէք միւս կողմից, միջազգայնութեան այդ վիթխարի հոսանքի հանդէպ՝ նեղմիտ, գձուձնացիոնալիզմի ու մարդակեր շովինիզմի համաձարակը, որ վարակել է ժամանակակից՝ գրեթէ ամբողջ մարդկութիւնը, որ

ոտնահարում է աշխարհի բոլոր սրբութիւնները, որ գրոհ է տալիս հաւասարութեան ու մարդկայնութեան գաղափարի դէմ ամեն անգամ, երբ դասակարգային առանձնաշնորհումները վտանգւում են, կամ երբ նրանք ձգտում են ընդլայնել իրենց տիրապետութեան հորիզոնները և յագուրդ տալ իրենց գիշատիչ, նեաճողական ախորժակներին։

Կրօնն անգամ — քրիստոնէութիւն, բողոքականութիւն, կաթոլիկութիւն — որ է իրօք միջազգային ու համաշխարհայնական, որ քարոզում է ամեն օր սէր ու եղբայրութիւն մարդկանց միջև, որ ընդունում է մէկ Աստուած միայն, հովանաւորող ամբողջ մարդկութեան, մէկ Արեգակ, լուսաւորող հաւասարապէս բոլոր ազգերին, առանց խտրութեան ցեղի ու գոյնի — կրօնն անգամ ի դէմս իր բոլոր ճիւղաւորութիւնների, յանձին իր բոլոր սպասաւորող դասակարգերի՝ պատրաստ է իսկոյն դաւաճանել իր քարոզներին, պատրաստ է իսկոյն գրկել ամենաբիրտ ազգայնամոլութեան դրօշակը և խրախուսել ժողովրդասպան ընդհարումները — հէնց որ այդ կաստ-դասակարգերի նիւթական ու այլ առանձնաշնորհումները վտանգված են լինում, կամ հէնց որ նրանք փորձ են անում նեաճելու նոր ազդեցութեան շրջաններ...

„Ազգային" բառի տեղ — ժամանակակից փոթորկոտ բաղխումների ու բանակռիւների ընթացքում — յաճախ լսւում է „ցեղային" բառը, ազգայնական հակամարտութիւնը մերթ ընդ մերթ վերածւում է ցեղականի։ Մենք տեսնում ենք երկու հզօր ցեղեր, սլավոնականութիւն և գերմանականութիւն, որ մղում են օրհասական մենամարտ՝ Արևելքի տիրապետութեան համար, — մէկը Ռուսաստանի, միւսը Գերմանիայի առաջնորդութեամբ։ Մենք տեսանք երկու տիտանների ուժգին բաղխումը Բոսնիա-Հերցեգի գրաւման ժամանակ։ Պանգերմանիզմի հռչակաւոր Drang-ը մի խոշոր քայլ ևս արեց դէպի առաջ և այդ յաղթական արշաւանքի հանդէպ սլաւոնականութիւնը մէկէն իմէկ սասանուեց Դրինայի ափերից մինչև Դեվա... Տեսանք համասլավոնութեան կատաղի ցոյցեր, սլավ ազգերի պատգամաւորական համագումարներ ու անոյժ ժեստեր... Դարձեալ նորագոյն կապիտալիզմի ամենազօր քմահաճոյքն է, որ միջազգային շուկայի շուրջը մղած իր ցասկոտ ընդհարումների մէջ կարողանում է միացնել — թէկուզ և ժամանակաւորապէս — միևնոյն ցեղի յաճախ հակամարտ հատուածները, ազգութիւնները՝ ի դէմս նրանց իշխող, բուրժուա և աւատական դասակարգերի...

Սակայն, բոլոր ժամանակակից ազգայնական հակառակութիւնները — նոյնիսկ խոշոր ազգերի միջև — ծնունդ չեն սոսկ կապիտալիստական դարաշրջանի և բէժիմի։ Բոլոր ազգային ընդհարումները չեն առաջանում իշխող, բուրժուա դասակարգերի մրցակցութիւնից, չեն պայմանաւորւում լոկ նրանց հակամարտ ախորժակներով։ Անտարակոյս, տիեզերական կապիտալիզմի մրցման քուրայում սաստկանում են այդ հակառակութիւնները, բայց այդ քուրան միայն չի ստեղծել նրանց։ Ազգային մրցում ու կռիւներ կան, որ գոյութիւն ունին դարերից ի վեր, որ չեն վերածւում տնտեսական գործօնների խաղերին, որ բղխում են ուրիշ կարգի պատճառներից։ Ազգային ճնշումներ կան, որ չեն գալիս միմիայն իշխող դասակարգերից, այլ որ գործադրւում են ազգովին, հաւաքականօրէն։ Գործադրւում են տիրող ազգի ընդհանրութեան կողմից՝ ընդդէմ հպատակ ու թոյլ ազգի ընդհանրութեան։ Դասակարգերի մրցութեամբ չէ, որ պիտի բացատրել լեզուների այն ահարկու պատերազմը, որ մղւում է երկար տարիներից ի վեր աւստրոունգարական թագաւորութեան մէջ, չեխերի ու գերմանացիների, ռուսինների ու լեհերի, ռումինների ու մաջառների միջև։ Բոհեմիայում երբեմն ամբողջ փոթորիկ էր պայթում „բառերի" շուրջը... լինի՞ գրւած „Zde", թէ՞ լինի „Hier" (այստեղ) — այս կամ այն հիմնարկութեան դրան ճակատին, այս կամ այն ցուցատախտակի վրայ... լինի՞ վերում „Zde" և վարում „Hier", թէ՞ լինի հակառակը... Դժւար է ասել, թէ այդ բոլորը չեխ ու գերմանացի բուրժուազիաների, իշխող դասերի սադրանքն էին։ Այդ բաղխումները ուղեցել են և կուղենան միշտ իրենց գոյութեան իրաւունքը։

Ոչ, ժամանակակից ազգայնական շարժումները — նոյնիսկ grosso modo — անկարելի է վերածել այլ և այլ երկրների իշխող դասակարգերի ձգտումներին, նրանց տնտեսական ու այլ մտահոգութիւններին։ Պատճառները բազմաթիւ են և այլազան... „Տնտեսականը" յաճախ բոլորովին խաւարում է կրօնական ու ցեղային խթանների, կոյր ու նախապաշարւած փանատիկոսութեան ուրագանի մէջ... Կայ վերջապէս, նացիոնալիզմ և նացիոնալիզմ։ Պէտք է զանազանել յարձակողական ու բռնաւոր նացիոնալիզմը այն ինքնապաշտպան նացիոնալիզմից ու հայրենասիրութիւնից, որ իւրաքանչիւր մարդկային համայնքի անբռնաբարելի սեփականութիւնն է և իրաւունքը։

Ազգային գաղափարը տօնում է այսօր իր հանդիսաւոր զարթօնքը նաև եւրոպական ցամաքից հեռու, տօնում է անգամ այնպիսի ժողովուրդների մէջ, որոնք տակաւին նոր են սկսում ունենալ իրենց պատմութիւնը, որոնք մինչև օրս եղել են սոսկ կրօնական համայնքներ։

Ահա, օրինակ, վերածնւող Տաճկաստանը։ Թիւրք տարրը, յանձին նոյնիսկ իր առաջադէմ ներկայացուցիչների, շեշտում է ուժգնութեամբ „տիրող ցեղի" խստապահանջ իրաւունքը՝ ուրիշ „հպատակ" ազգերի հանդէպ։ Նա մերթ ընդ մերթ մատնում է աշխարհին նոյնիսկ ձուլման ախորժակներ նա, ըստ երևոյթին, հնարաւոր է գտնում վաղ թէ ուշ լուծել ազգային տարբերութիւնները՝ մէկ ընդհանուր օսմանեան ազգի — տաճկութեան մէջ... Չէ՞ որ եղել են նման օրինակներ պատմութեան ընթացքում։ Չէ՞ որ նոյնիսկ ամենամաքուր „ազգային պետութիւնը", Ֆրանսիան, առաջ է եկել տարբեր ցեղերի մի անօրինակ խառնուրդից։ Մարսէլի գաղթական յոյները, Նարբոնի ու Նիմի հռոմայեցիները, հին Գաղիայի ուրոյն ցեղը — գաղիացիները — Դեոնկերկի ու այլ տեղերի ֆլամանները, Բրըտանի և Օվերնի կելտերը (celtes) և այլն և այլն — դրանք բոլորն էլ հոսեցրել են իրենց արիւնը ժամանակակից ֆրանսիացու երակների մէջ, դրանց բոլորից պատմութիւնը ստեղծագործել է այսօրեան ֆրանսիական ազգը։

Բայց հենց խնդիրն այդտեղ է, որ պատմութիւնն է ստեղծագործել—և այն՝ երկար դարերի ընթացքում, անհամար փորձութիւնների ու արհաւիրքների մէջ, ուր—գիշերի պերճ արտայայտութեամբ—այդ բոլոր ցեղերը, հաստատուած միևնոյն մայրհողի վրայ, կրել են միասին „թէ յաղթութեան գինովութիւնը և թէ պարտութեան սուգը“ (*et l'ivresse de victoire et le deuil de la défaite*)։

Ո՞ւր է մի այդպիսի ներդաշնակ „պատմութիւն“ օսմանեան երկրում...

Ֆրանսիայի օրինակը դեռ եզակի է։ Ուրիշ քաղաքակիրթ պետութիւններից և ոչ մէկը չի տեսել ցեղերի այդքան կատարեալ մի ձուլում, ուր այլևայլ արիւններից, բարքերից ու բարբառներից հրաշակերտուէր մի համատարը ազգ, մէկ լեզուով ու պատմութեամբ, մէկ ոգով և խառնուածքով։ Այդ եզակի օրինակի հանդէպ՝ քանի՞ քանիսը կան, որ տառապում են ներքին խորունկ հակասութիւններով, ազգայնական մշտնջենաւոր երկպառակութեամբ։ Ահա Աւստրիան—մի այլ ուշագրաւ, տիպական նմուշ Ֆրանսիայի հակոտնեան... Ազգերի կռիւը իր բոլոր աւերիչ արտայայտութիւններով՝ մի տեսակ բնականոն վիճակ է այդտեղ և ոչ մէկը գոյութիւն ունեցող ցեղագրական միութիւններից չի ուզում մի նշանախեց անգամ զիջումն անել իր իրաւունքից... Եւ սակայն—չը մոռանանք—աւստրիական պետութիւնը կազմող ազգերը ունեցել են մի յայտնի չափով նոյնիսկ ընդհանուր պատմութիւն, ունեցել են համերաշխ գործակցութեան դռռ ու յիշատակելի վայրկեաններ, ուր ճաշակել են ձախորդութեան ու դառնութեան հետ՝ նաև աջողութիւն ու բերկրանք։ Հաբսբուրգեան միապետութեան դրօշակի տակ միացած՝ քանի՞ անգամ այդ այլատարը ազգութիւնները թումբ են կանգնել արևելքից գահավիժող բարբարոսութեան յորձանքների դէմ... Այնուամենայնիւ, Աւստրիան միշտ մնաց տարբեր, հակամարտ ժողովուրդների մի արհեստական հաւաքոյթ, մի կօնգլօմերատ. նա չը դարձաւ ներդաշնակ ու միաձոյլ մի զանգուած. „աւստրիացի“ արտայայտութիւնը չեղաւ երբէք որևէ „ազգութեան“ անուն, տիտղոս, այլ իւրաքանչիւրը այդ ցեղագրական Բաբելոնի անդամներից շարունակեց կոչել ինքզինքը իր ուրոյն ծագման անունով,—գերմանացի, լեհ, չեխ, մաջառ, ռուսին և այլն։ Չը կայ „աւստրիական ազգութիւն“—նա մի պատրանք է։ Կան միայն աւստրիական „ազգութիւններ“...

Գալիցիայի լեհը իր բովանդակ էութեամբ կապուած է Վարշաւայի ու Պօզնանի լեհերի հետ, մինչդեռ նրա կապն ու ազգակցութիւնը աւստրիական միւս ազգերի հետ, որքան էլ նա ամրապնդւի կուլտուրայի առաջադիմութեան ընթացքում, մնալու է միշտ համեմատաբար աւելի թոյլ, մակերեսային։ Նոյն Գալիցիայի ռուսինը շատ աւելի մօտ է զգում իրեն Ռուսաստանի, Ուկրայնայի ռուսիններին, որոնց հետ նա նոյնպէս կապուած է պատմական անխախտելի կապերով։ Նոյն ուժերի տրամաբանութեամբ՝ գերմանական տարրը (Աւստրիայում) ձգտում է միշտ դէպի Մայր-Գերմանիան, որի հետ, նա բաժանում է ընդհանուր ու մայրենի լեզուն և ազգային ճոխ գրականութեան ու քաղաքակրթութեան գանձ։ Նոյն բնազդական հայրենակցական ձգտումը մղում է միշտ հարաւային սլաւներին դէպի Սերբիա և Տրենտի ու Տրիեստի իտալացուն դէպի Մայր-Իտալիա...

Ոչ մի ուժ չի կարող խախտել այդ հզօր ու տիրական բնազդը։ Ժողովուրդներին շաղկապողը, ինչպէս կը տեսնենք մեր յետագայ յօդուածների մէջ, աւելի հոգևոր (*spirituel*) գանձերն են, քան սոսկ նիւթական քաղաքակրթութիւնը, և որքան էլ Աւստրիան զարգանայ, առաջադիմէ, որքան էլ կուլտուրայի ու միջազգայնական հոսանքների ազդեցութեան տակ աճի ազգերի փոխադարձ համերաշխութիւնը, երբէք, այնուամենայնիւ, այդ երկիրը չի կազմելու մի միաձոյլ ազգ, բառիս թէկուզ միայն ֆրանսիական իմաստով։ Լեհը միշտ մնալու է լեհ, կապուած աւելի ուժեղ կապերով միւս երկրների իր հարազատների հետ, իտալացին մնալու է միշտ իտալացի, ռուսինը՝ ռուսին և չեխը՝ չեխ։

Եթէ այդպէս է ճակատագիրը աւստրիական միապետութեան—ուր, կրկնում ենք, տարբեր ցեղերը պատմական յայտնի վայրկեաններում ապրել են ընդհանուր ցաւերով, յետ են մղել ընդհանուր, աշխարհաւեր ոսոխներին, մշակել են կուլտուրական մի որոշ համայնակենցաղ,—եթէ այդ երկրում տակաւին խօսք չի կարող լինել մի միաձոյլ ազգային զանգուածի, „աւստրիական ազգութեան“ մասին—ապա ևս առաւել Տաճկաստանում, ուր պատմութիւնը, տարաբախտաբար, ոչ թէ չի միացրել այլազան ազգութիւններին որևէ ընդհանուր, քաղաքակրթական դատի շուրջը, այլ, ընդհակառակը, միշտ բաժանել է, պառակտել, միշտ ատելութեան ու թշնամութեան որոմ է ցանել ազգերի միջև։

Այդտեղ է մեր երկրի դժբախտութիւնը։ Ցուսահատելու պէտք չը կայ, ի հարկէ։ Ազգերի համերաշխութիւնը մի օր, անշուշտ, կը դառնայ այդտեղ ևս կենդանի իրականութիւն, բայց մի բան, որ երբէք չի իրականանայ,—դա ազգերի ձուլումն է, որ թերևս երազում են մի կարգ մակերեսային պոլիտիկոսներ, դա ազգերի կլանումն է (*assimilation*) տիրապետող ցեղագրական օրգանիզմի մէջ։ Դա մի անհոգ ցնորք է, մտացածին մի երազանք։ Հայը միշտ կը մնայ հայ, յոյնը միշտ յոյն, իր լեզուով ու ազգային ուրոյն քաղաքակրթութեամբ։ Եւ ինչպէս որ Գալիցիայի լեհը ձգողական մի անյաղթելի զօրութեամբ մղւում է միշտ դէպի սահմանի միւս կողմը գտնուող հարազատները, առանց անպատճառ հետապնդելու լեհական սեպարատիզմի, անկախութեան,—այնպէս և թիւրքահայը, ապրելով հանդերձ քրդի, տաճկի հետ մէկ օճախի մէջ, մէկ ընդհանուր պետականութեան հովանիի տակ և մի ներդաշնակ քաղաքական-հասարակական համակենցաղով, մղելով հանդերձ այդ ընդհանուր պետական իրաւակարգը դէպի աստիճանական կատարելագործում, դէպի ճշմարիտ ռամկավարութիւն, պիտի շարունակէ կապուած մնալ կովկասեան ու այլ երկրների հայութեան հետ աւելի ուժեղ, աւելի շեշտուած ազգակցական ու հայրենակցական շղթաներով—շղթաներ, որոնք իրենց արիւնակուռ զանգուածի մէջ խտացնում են մի հսկայական, բազմադարեայ պատմութիւն, մի սրտառուչ, արտասուացող դիւցազներգութիւն...

Կայ հիւանդոտ կօսմօպոլիտիզմ (համաշխարհաքաղաքացիութիւն), ինչպէս կայ նաև հիւանդոտ նացիոնալիզմ. մեր խօսքը դրանց մասին չէ, այլ նորմալ,

առողջ հայրենասիրութեան մասին, որ էվոլիւցիայի խթաններից մէկն է և որ ոչ մի արտաքին ճնշում չի կարող արմատախիլ։

Մանր ազգերը ամենուրեք հզօր ու կատաղի նախանձախնդրութեամբ հաստատում են իրենց դիրքը Արեգակի տակ, պահպանում են իրենց ուրոյն կերպարանքը, իրենց լեզուն ու հաւաքական ստացուածքները։ Հրէութեան պէս ցիր-ցան ու տարագիր, լքեալ ու հալածական համայնքն անգամ Ռուսաստանում ու այլ վայրերում յամառ տոկունութեամբ մաքառում է այսօր „ձուլման“ բռնաւոր ախորժակների դէմ և ընթանում է դէպի ազգային ինքնօրինութիւն, եթէ ոչ հողային ու քաղաքական, գէթ կուլտուրական ինքնօրինութիւն։

Աւելի ուշագրաւ մի երևոյթ։ Ազգային ոգին բարձրանում է անգամ աշխարհի ամենաազատ կայսրութեան՝ Մեծ Բրիտանիայի գաղութներում ու հովանաւորեալ երկրների մէջ—Հնդկաստանում, Եգիպտոսում։ Քաղաքական լայնազատ ռէժիմն անգամ չի աջողում ձուլել „մարսել“ հպատակ ցեղերին։ Ազգայնական շարժումը ծայր է տուել երկու յիշեալ երկրներում—արաբների ու հնդիկների մէջ—և արդէն իսկ լուրջ մտահոգութիւն է պատճառում „ծովերի միսհեծան թագուհուն“։ Երիտասարդ հնդիկները նեռում են տերբրօրական, կարմիր ճանապարհը և քիչ առաջ նրանց մոլեռանդ, գաղափարական ռահվիրաներից մինը, ուսանող Թինգրա Լոնդոնում օր ցերեկով գետին փռեց Հնդկաստանի վարչութեան անդամներից մէկին, հռչակելով իր այդ մահափորձը, որպէս հնդկական հայրենասիրութեան մի անխուսափելի ու սուրբ բռնկում...

Ահա փաստեր, մինը միւսից ուշագրաւ, մինը միւսից հրահանգիչ և ուսանելի։ Ազգային գաղափարը, կատարելով իր դարաւոր, հոյակապ թափօրը պատմութեան մէջ, այսօր դեռ բնաւ տրամադիր չէ իջնելու կեանքի բեմից։ Ընդհակառակը։ Մերթ կատաղօրէն յարձակողական, մերթ համբերէն պաշտպանողական, նա շարունակում է յուզել ամենուրեք հասարակական գիտակցութիւնը և մտատանջել դիպլոմատներին, քաղաքագէտներին։

Նա վալակում է ինտելիգենտ խուղարկու միտքը նոյնիսկ այնպիսի միջավայրերում, ուր երկար ժամանակ տիրել է կատարեալ անտարբերութիւն ազգայնական վէճերի շուրջը, ուր վաղուց ի վեր առաջադիմական բանակների մէջ չի լսուել նացիոնալիզմի ու ազգային դերիշխանութեան նշանաբանը։

Այդպէս—Ռուսաստանում։ Ռուս առաջադէմ մտաւորականութիւնը մինչև օրս սիրում էր անուանել ինքզինքը ապազգայնական, anational, այսինքն անտարբեր ազգային հարցերում։ Այսօր սակայն, կատարւում է նրա մէջ մի նշանակալի շրջում։ Իրօք, դա բնաւ անակնկալ չէր, միայն թէ մեր օրերում և Ռուսաստանի քաղաքական հիւանդոտ մթնոլորտում, ազգայնական այդ volte-face-ը կատարւում է փոքր ինչ վայրագ անսպասելի ձևով։ Մինչ հոկտեմբերեան պահպանողականներ և կադետներ ձեռք ձեռքի տուած, պանգերմանիզմի սրարշաւ առաջադիմութեան հանդէպ՝ դուրս են կոչում 40-ական թեւակոնների Ակսակովեան պանսլավիզմը (համասլավոնութիւն) „նէօսլավիզմ“ անուան տակ՝ նախկին մարքսիստ ու սոցիալ-դեմոկրատ Պեոտր Ստրուվէ իր մի քանի համհարզների հետ արծարծում է եռանդով „իշխող տարրի“ (ռուսականութեան) առանձնայատուկ իրաւունքները, խօսում է „ազգային դէմքի“ ու „ինքնակալ ազգութեան“ մասին (державная нація) և ուզում է վերադարձնել ռուս ինտելիգենցիան դէպի Պուշկինի ժամանակները, երբ համբաւաւոր ժողովրդական բանաստեղծը Լեհաստանի ազատագրական ու անջատական ձգտումների հանդէպ յորինում էր իր թունոտ ու շանթոտ, ազգայնամոլ ոտանաւորը „О чемъ шумите вы, народные витіи?“...

Ստրուվէ և իր թիկնապահները, յեղափոխութեան վիժման ծանր վայրկեաններում, ընդհանուր լքման ու յոգնածութեան մի արտասովի շրջանում ուրիշ, լաւագոյն ելք չեն գտնում այդ զարհուրելի մթնոլորտից, բայց եթէ վառել ցեղային բիրտ շովինիզմը, բայց եթէ խօսել ազգերի „վանողական“ բնազդների մասին, շեշտել առնական „ազգային դէմքը“, որ ոչ ոք չի փորձել ոտնահարելու, արծարծել ինքնակալ, վելիկօրօսական նացիոնալիզմը՝ ընդդէմ հրէական ու այլ նացիոնալիզմի երևակայական ոտնձգութիւնների...

Այդպէս է „ազգային իրականութիւնը“։ Նա անդրադառնում է ամենուրեք մտածող գլուխների մէջ և նայեած տեղին ու հանգամանքներին, նայեած դասակարգին ու ազգայնական խառնուածքներին այդ իրականութիւնը ծնում է որոշ իդէօլոգիա, գաղափարաբանութիւն, ծնում է այլազան քաղաքա-հասարակական հոսանքներ։

Մի կողմից ահա հերվէ իզմը, որ մարմնացնում է բուն ապազգայնը հոսանքը (anationalisme), որ կղզիացած իր ֆրանսիական հայրենիքի մէջ կամենում է իր հակապատրիոտ ու հակամիլիտարիստական ուղղութեամբ կանգնել որպէս մի տեսակ պատուար, հակակշիռ բուրժուա-կապիտալիստական գիշատիչ նացիոնալիզմի դէմ։ Նա ժխտում է բացարձակապէս ազգի ու հայրենիքի գաղափարը, համարում է այն նախապաշարմունք ու բուրժուական մի յղացում, յայտարարում է, որ նոյնիսկ վտանգի, նոյնիսկ արտաքին նուաճողական արշաւանքի հանդէպ՝ բանւոր ու սոցիալիստ ընդհանրութիւնը չը պիտի պաշտպանէ այդ հայրենիքը...

Միւս կողմից ահա՝ այդ հիւանդոտ ծայրայեղութեան անտիպոդը, նրա հակադիր բևեռը, բուն ազգէսսիվ, աշխարհակալող ցեղա-ազգայնական շովինիզմը, որ յորջորջւում է տարբեր տեղերում տարբեր անուններով—պանգերմանիզմ (համագերմանականութիւն), պանբրիտանիզմ, պանամերիկանիզմ, պանսլավիզմ, պանիսլամիզմ — տոգորուած ամենքն էլ՝ իրենց յատուկ ցեղային, ազգայնական կամ կրօնական տիրապետութեան տենչանքներով։

Միւս կողմից՝ մեր առջև պարզւում են մի շարք աւելի մանր ազգայնական հոսանքներ — սիոնիզմ, պանարմենիզմ, պանհելլենիզմ, պանպոլոնիզմ և այլն—որոնց պէտք է զանազանել առաջիններից, որոնք իբրև էապէս պաշտպանողական հոսանքներ (մանաւանդ առաջինները երկուսը), չեն տարուած նուաճողական բռնաւոր ախորժակներով, չեն ուզում

ոտնահարել որևէ ազգի նուիրական իրաւունքները, այլ ձգտում են ապահովել—թէկուզ և տարբեր պետութիւնների սահմաններում—հարազատ ազգակիցների ֆիզիքական յարատևութիւնը, նրանց քաղաքական ու կուլտուրական զարգացումն ու բարգաւաճումը։

Միւս կողմից, վերջապէս, կայ հզօր ու իրաւ համաշխարհային հոսանքը—Սոցիալիստական Ինտերնացիոնալը, որ մի ջ ազ գ այ ն ա կ ա ն իր գաւանանքով կոչուած է միակ ու լաւագոյն լուծումը տալու ազգային չարաչարանքի ու բարդ հանգոյցին... Բայց այդտեղ ևս ազգային գաղափարը չի լուծւում ծոյլ ու անգոյն կոսմոպոլիտիզմի մէջ։ Ամենևին։ Սոցիալիզմի քարոզածը ազգայնական վէճերի մէջ այլ ևս նախկին „անմիս ու անարիւն ինտերնացիոնալիզմը չէ“ (պերներստորֆեր), որ ոգևորում էր „կոմմունիստական մանիֆէստի“ հեղինակներին և նոյնիսկ 80-ական թուականների սոցիալիստներին։

Անցան այն ժամանակները, երբ սոցիալիստական ֆրազաբանութեան մէջ հոլովւում էին շարունակ „բանուորները հայրենիք չունին“ և նման պարապ ֆօրմուլները։ Կեանքը ճզմեց նրանց իր երկաթէ տրամաբանութեան տակ և այսօր աշխարհի բոլոր սոցիալիստական կուսակցութիւնների ծրագիրներում ու տակտիկի մէջ ոչ միայն շեշտւում է առողջ ազգայնութեան ու հայրենասիրութեան դաւանանքը, այլ նոյնիսկ տեսնում ենք սոցիալիստական բանակի մէջ անհատական մետաֆորմոզներ (փոխակերպութիւն) à la Ստրուվէ—ոչ ի հարկէ, նոյն այլանդակ չափերով—տեսնում ենք սոցիալիստներ, ինչպէս Լայթներ Գերմանիայում, ինչպէս Վան-Կոլ Հոլլանդիայում, Վանդերվելդ Բելգիայում, Ֆերրի ու Թիսսոլատի Իտալիայում, որոնք չեն քաշւում ժամանակ առ ժամանակ հուչակելու ազգային հզօր քաղաքականութեան անհրաժեշտութիւնը արտաքին աշխարհի դիմաց, գաղութների մէջ, արծարծում են „ազգային ծաւալման“ ու պաշտպանութեան այնպիսի ծրագիրներ, որոնք սովորաբար դիտւում են, իբրև անընդունելի սոցիալիստական աշխարհահայեացքի տեսակէտից։

Այս բոլոր այլազան իրողութիւնները, որ շեշտւում են ազգային հարցի լայնածաւալ աշխարհում, թէ բուրժուական կապիտալիստական, թէ ռամկավար ու սոցիալիստական „նացիոնալիզմի“ զարգացման մէջ, հարկադրում են մեզ լրջօրէն նայել ազգայնական պրոբլեմի վրայ, և զատելով նրա հիւանդոտ ծայրայեղութիւնները, ի տես դնել նրա անվթար ծուծ-կորիզը։ Ցեսական մտահոգութիւններից զատ՝ կայ այդտեղ և գործնական ծանրակշիռ մի նկատում։ Մեր օրերում, երբ հայ գործող երիտասարդութեան մի մասի մէջ—առանձնապէս Ռուսաստանում—կայ ձգտումն դէպի չոր ու գձուձ նիւթապաշտական մարզանքներ, դէպի խոշոր իդէալների մերժում, օտարացում, հարկ է վաւել, հրահրել վերստին իդէալիզմի ու անձնուրաց խանդավառութեան հզօր շունչը այն հարազատ միջավայրում, ուր բողբոջել ու փթթել են մեր լաւագոյն առաքինութիւնները վերջին տասնեակ տարիների ընթացքում, հայկական Risorgimento-ի անդրանիկ շեփորումներից ի վեր...

Միւս կողմից՝ հարկ է զգուշացնել մեր երիտասարդութեան մի այլ մասը—առանձնապէս Թիւրքիայում,—ուր ազատութեան ծանուցումից ի վեր ցեղային ու ազգայնական բաղխումները ստեղծելու վրայ են մի ցաւատիթ կացութիւն à l'autrichienne—հարկ է զգուշացնել դիւրաբորբոք այն տարրերը—մի չնչին փոքրամասնութիւն, անտարակոյս—որոնք բաւականաչափ չեն ըմբռնում հայ առաջադէմ կուսակցութիւնների „համերաշխութեան ու միջազգայնութեան“ քարոզները, որոնք հակւած են տարբերու շովինիստական հովերով և կարող են—մի մռայլ ու խոպան միջավայրում—պատրակ լինել (ոչ պատճառ) չարաշուք թիւրիմացութիւնների...

Մտնենք „ազգային գաղափարի“ խորքը, փորձենք լուսաբանել ու գնահատել այն՝ իր պատմական զարգացման և իր ներկայ կիրառումների մէջ։ Փորձենք, մանաւանդ, ի ցոյց դնել այդ հաւաոր հանգոյցի լուծման լաւագոյն եղանակը, ըստ հասարակական գիտութեան վերջին խօսքի, ըստ ժամանակակից աշխարհայեցութեան։

Ա Ր Թ Ո Ւ Ն

Կովկասից մեզ մօտ ստացւած նամակները երբեմն յուսահատ շեշտեր են պարունակում, որ նմանում են ա հ ա ղ ա ն գ ի... Հայակերների ու պրովոկատորների վատթարագոյն տեսակը, որ ամբարտաւան գլուխ է բարձրացրել ընկերային ներկայ օրերին՝ սպառնում է թերևս նոր Բարդուղիմէոսեան գիշերներ ընծայել դժբախտ ու արիւնաքամ Անդրկովկասին։ Անհնարին և անհեթեթ ոչինչ չը կայ այդ սոսկալի հիպոթէզի մէջ։ Հայ ինտելիգենցիայի դէմ սկսւած պոգրոմը, հակահայկական անլուր արշաւանքը, որ մղւում է մի տարուց ի վեր քաղաքների և գաւառների մէջ, հայ ժողովրդի զինաթափութիւնը, անտարակոյս, քաջալերել են միջազգային պրոֆէսիոնալ գրգռիչներին, որոնք տապալւած համարելով իրենց հարկու հակառակորդին—հայ ժողովրդական կազմակերպութիւնը—որոճում են թերևս նոր հայասպան ծրագիրներ... Հողը նրանց համար տակաւին պարարտ ու հիւրընկալ է, տարաբախտաբար... Հին, մրափող ատելութիւններ, խուլ ոռնացող վրէժխնդրութիւն, թալանի ու սպանութեան ախորժակներ... այդ բոլորը դեռ կայ առատօրէն կովկասեան դժբախտ միջավայրում։ Կարմիր խենդութեան ուրուականը դեռ գուցէ չի ասել իր վերջին խօսքը։ Եւ հարկ կա՞յ շեշտելու, որ այդ խօսքը մահու ու աւերածի շանթեր պիտի ժայթքէ դարձեալ հայ ժողովրդի հասցէին։ Հարկ կա՞յ յիշելու, որ պրովոկատորական, յարձակողական ախորժակները պատրաստ են կատարել իրենց վայրենի ապօթէօզը դարձեալ հայկական աւերակների վրայ...

Չը մարգարէանանք։ Յուսահատ աղաղակերով չը յուզենք մթնոլորտը։ Շատ չը խօսենք, բայց շատ մտածենք։ Չ'ասենք „անհնարին է“ և թեթեւամիտ ու յանցագործ լաւատեսութեամբ չ'անգիտանանք մեր մշտնջենաւոր հսկողութեան պարտաւորութիւնը։ Մեր անիծապարտ իրականութեան մէջ բոլոր „անկարելիութիւնները“ դառնում են կարելի—և դժդակ անակնկալներին դիմագրաւելու միակ միջոցն է՝ ա ր թ ո ւ ն լինել միշտ, շրջահայեաց ու պատրաստ լինել...

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

Պալբանեան Կեդր. Կոմիտէն ստացած է՝

(Շարունակութիւն № 5-ի)

ԱԾՈՒԽԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷԷՆ (1908 ապրիլէն).—Սրճարանի հասոյթ 1135. 80 ֆր. խմբերէ՝ Դուրգէն 54, Վարազ 38, Առիւծ 42, Եփրաս 54, Տարօն 50, Արձագանգ 27, եւս 18, Արծիւ 36, Արարատ 57, Կարմիր լեռ 57, Հարաւային 48, ուրիշներ՝ Յովհաննէս Փողանեան 5, Սեդրակ Աբրահամեան 5, Յակոբ Աբրահամեան 5, Մինաս Ոսկանեան 5, Լեւոն Վարդանեան 10, Եայլագ Հայրապետեան 5, Պաղուէն հանգանակած՝ Մելիքսեդեկ Տ. Անարոնեան 20, Օհաննէս Փաւայեան 20, Աբրահամ Պալեան 10, Թազոր Զ. Զարգնեան 20, Բարեղ Դ. Նահէսեանէ 30, Յ. Դէորգեան 10, Յակոբ Սրապեան 5, Յովսէփ Ելգիեան 5, Ռափայէլ Թէքլիրլիեան 5, Սարգիս Եղիկեան 3, Դր. Սրապեան 2, Յովհաննէս Գրիգորեան 2, Տօնիկ Ասատուրեան 2, Յակոբ Սերոբեան 2, Ռօմանէն հանգանակած՝ Մկրտիչ Պաղդասեան 10, Ղազար Պողոսեան 10, Վարդան Զաքարեան 10, Գր. Խաչիկ Պաղդասեան 10, Գառնիկ Ալբանեան 5, Մխիկ Սէրօեան 5, Նիշան Պապանիկեան 2, Բիւրեա Նիսանէն հանգանակած՝ Սրապ Կ. Ճէմելեան 2, Մարկոս Կարապետով ճէմելեան 10, Սարգիս Մանուշեան 20, ծախած հրատարակութիւններէ 33: Դումար 1922 ֆր. 80 սանտիմ:

ԱՅԹՕՍԻ ընկերներէն հաւաքուած՝ ի նպաստ բանտարկեալներու 40 ֆր., Պալ. Կ. Կ.-ի միջոցով ծախած հրատարակութիւններէ 113. 10, Պարտիզակէն Դ. Բ. 10 ֆր.:

Ընդհանուր գումար 13,857 ֆր. 95 սանտիմ:

ՈՍԿԵՀԱՆԵՒ ՄԱՐՄԻՆ (մայիս 1 1907—1908 մայիս 31).—Կայծակ 90 դրշ., Վաղինակ 116. 20, Լեռնադաշտի Բազարաս 95, Կաթ 62, Հին-Դուրգէն 45, Յ. Պարոյր 46, Թորգոմ 94, Վազրիկ 10, Տանուէր Խաչօ 19, Բիւզանդ 8, Կ. Մ. 6, Մ. Լ. 2, Յ. Ա. 2, Մ. Ա. 2, Կայծակ 12, Շանթ 11. 30, Մ. Բ. 2, Մ. Պ. 1, Ս. Պ. 6. Դումար 630 դրշ. 10 փ.:

ԼԵՌՆԱԴԱՇՏ (1907 օգոստոսէն մինչ 1908 մայիս 31).—Բարուկակ 50 դրշ., Վանրիկ 50, Բազարաս 50, Վարազդաս 50, Հայկազուն 2: Դումար 202 դրշ.:

Ընդհանուր գումար 832 դրշ. 10 փարա:

ՓԻԼԻՊԷԻ ԿՕՄԻՏԷԷՆ. — Հեռեւեալ խմբերէ՝ Պօրիսօվկրաւի Շմաւոնեանի Ա. տասնեակ 15 քրանկ, Գայանդզի Անանուրաց 18, Հասքօվօյի Գէորգ-Զաւուշ 16, Սօսի-Այծեամ 22. 50, եւս 9, Հրայր 30, եւս 25, Բրիսպափոր-Պեսօ-Պուլկարացի 49. 50, եւս 18, Հեթում-Պագիկ 39, Օր. Կարմիր խաչ 24. 50, Օր. Կարմիր խաչի վիճականաւուրքնէ 151, Սրամեան 38. 50, Վազգէն 79, Արեւելեան-Տէրօր 76, Վրէժ 48, բատրոնի զուտ հասոյթ 431, „Դրօշակի" բաժնեգին 299. 70, հրատարակութիւններէ 114. 90: Դումար 1504 ֆր. 60 ս.:

ՌՈՒՍՁՈՒԿԻ ԿՕՄԻՏԷ.—Հեռեւեալ խմբերէ՝ Վրէժ 30 ֆր., Սիփան 25, եւս 14, Բաթկէն-Սիւնի 36, եւս 14, Մարօ 30, եւս 51, եւս 31. 50, Մանուէլեան 14, Հրայր 37, ուրիշ Օգմանէ 2, Սվեբօվի Կայծակ 42, եւս 39, Ճուրնովայի Մոկան 91, Սոմովիսի Արկած 96, Թրնօվոյ Վազր 18, „Դրօշակի" բաժն. 51, հրատարակութիւններէ 24. 40: Դումար 716 ֆր. 90 ս.:

ՍՕՖԻԱՅԻ ՄԱՐՄԻՆ.—Հեռեւեալ խմբերէ՝ Հրայր 32, Սերոբ-Աղբիւր 40, եւս 63, Անդրանիկ 29, եւս 30, Սեպուհ 58, հանգանակութենէ (նախորդ տարւայ) գոյացած 300, հրատարակութիւններէ 13. 45, դատավարութենէ ուրիշ Սոմովիսի Խ. Գ.-է եւ ընկերէն 120: Դումար 685 ֆր. 45 ս.:

ՎԱՆՆԱՅԻ ԿՕՄԻՏԷ.—Հեռեւեալ խմբերէ՝ Տիկ. Շուշան 34. 50 ֆր., եւս 20. 50, եւս 14, եւս 6. 50, Տարօն 18, եւս 34, Յառաջադիմական 28, եւս 10, եւս 10, Ռեսունի 51, Կուկունեան 37, եւս 14, Առիւծ 8, Մարտիկ 14, Արամ 30. 50: Դումար 330 ֆր.:

ՊՈՒՐԿԱԶԻ ԿՕՄԻՏԷ. — Հեռեւեալ խմբերէ՝ Եփրաս 129 ֆր., Անտօ 6, եւս 36, Արամ 72, Բուլ-Բարեր 56, եւս 55, Սասուն 8, եւս 72, Պեսօ Պուլկարացի 99, Արաքս 96, Աղթամար 63, Անդրանիկ 16, եւս 57, Այդոսի Արշաւիր Կամսարական 42, եւս 43, Օժանդակ 176. 50: Դումար 1026 ֆր. 50 ս.:

ՓՇՈՏ ՎԱՅՐԻ ՄԱՐՄԻՆ.—Հեռեւեալ խմբերէ՝ Զէյթուն 6 ֆր., Կոլկաս 20, Սէրէմնեան 27, Ֆէդայի 69, Նէվրուզ 69, Մարօի տոմսակներու դիմաց 55, դիմաց զանձուած Խ. Մ.-է 20, դիմաց զանձնած Զէյթունի խումբէն 13, Սէրէմնեան 18, Նէվրուզ 27, Ֆէդայի 20, Կոլկաս 11: Դումար 355 ֆր.:

ՓՈՐԹԻ ԿՕՄԻՏԷ.—Հեռեւեալ խմբերէ՝ Ղեւոնդեան 146. 50 ֆր., եւս 45, Զորս Գանձ 50, եւս 33, Սերոբ-Աղբիւր 73, եւս 42, Եփրաս 159, եւս 52. 50, Գէորգ Զաւուշ 11, Տրդատ 20, Դեւեան 24, 50, եւս 14, 50, Անդրանիկ 96, եւս 31, Աղուարդ 79, եւս 24, սրճարանի հասոյթ 640, Համբարձում Ն. 13, Գր. Խ. 92, տուգանք 10, Սերոբ-Աղբիւր խ.-ի ընկերներէ ուրիշ 15, Յ. Մ. ուրիշ 7, Մեսրոպ ուրիշ 5, Մարգար 3, հրատարակութիւններէ 64. 50, „Դրօշակի բաժն. 72: Դումար 1822 ֆր. 50 ս.:

ԴԱՆՈՒԲ ԿՕՄԻՏԷ.—Սրճարանի հասոյթ 634. 35 ֆր., խմբերէ՝ Տիկ. Կարմիր Խաչի զանձանակէ 79, եւս 24. 40, Ֆէդայի 15, եւս 15, Հազուլ 9, Կայծակ 21, եւս 27, Սեպուհ 27, եւս 27, Նոր դար 39, եւս 48, Արարատ 18, եւս 18, Սերոբ-Աղբիւր 21, եւս 15, Նէմրութ 24, եւս 24, Զինուորէ 15, եւս 24, Վարազ 21 եւս 24, Կարին 12, ուրիշներ՝ Գայր 3, Վանրիկ 5, Սիմէկիր 4, Մէկ հաս 3, Զարմայր 3, Զէրէզ 3, Թաքուլ 5, հրատարակութիւններէ 32: Դումար 1239 ֆր. 75 ս.:

ԱԾՈՒԽ ԿՕՄԻՏԷ.—Սրճարանի հասոյթ 1251. 80 ֆր.; խմբերէ՝ Դուրգէն 35, Վարազ 67, Առիւծ 49, Եփրաս 54, Տարօն 36, Արձագանգ 54, Արծիւ 48, Արարատ 66, Կարմիր Լեռ 51, Հարաւային 54, Նիսար 66, Անդրանիկ 75, Աղուլ 108, ուրիշներ՝ Յ. Փ. 5, Յ. Ա. 5, Ս. Ա. 5, Մինաս Ոսկան 5, Լ. Վ. 10, Խ. Հ. 5, Պ.-եան 20, Թ. Գր. 10, Յ. Մերզէ 8, հրատարակութիւններէ 52. 50: Դումար 2140 ֆր. 30 ս.:

Ընդհանուր գումար 9821 ֆրանկ:

Բարձրբերդի Կեդր. Կոմիտէն՝

1908 թ. — Յ. Հ. եւ եղբարք 2100 դրշ., Պ. եղբարք 1750, Ազգային ուն 1400, Զ. եղբարք 1050, Դ. Զ. 1050, Ա. Ս. 1050, Յ. Ա. 1050, Տ. Դ. եղբարք 770, Բ. Լ., Ռ. Լ., Մ. Տ. Ա., Բ. եղբարք, Ե. եղբարք, Ռ. Ս., Յ. Խ., Վ. Մ., Ս. Մ., Ս. Փ., Յ. Օ., Ա. Զ., Մ. Գ. 700-ական, Յ. Պ. 560, Յ. Փ., Ս. եղբարք, Խ. Շ., Մ. Տ., Գ. Հ. 525-ական, Յ. Գ. 490, Ա. Ա., Պ. Պ., Մ. Գ. Ղ., Խ. եղբարք, Ա. Բ., Ա. Զ., Մ. Յ. Ս., Ա. Գ., եղբարք Վ., Գ. Փ., Ս. Ա. Տ. Ա., Ս. եղբարք, Մ. Ե., Մ. Գ., Ֆ. եղբարք, Ռ. Ժ., Յ. Ալ., Մ. Մ. Զ., Յ. Ե., Ա. Շ., Խ. Գ., Պ. եղբարք, Մ. Ղ., Պ. Ճ., Մ. եղբարք, Ա. Ա., Յ. Ո., Ն. Հ., Յ. Մ., Փ. եղբարք, Խ. Պ., Ն. Կ. 350-ական, Հ. Ա. 400, Խ. Ս., Վ. Մ., Մ. Գ. Պ., Խ. Պ. 210-ական, Յ. Տ. 140, Մ. Պ. 400, 21 զանազան արհեստաւոր դասակարգէ 3784. 50, 8 ուսուցիչներէ 543. 10: Դումար 4327 դրշ. 30 փարա:

1908 օգոստոս 1—15 մարտ 1909. — Հեռեւեալ խումբերէ՝ Բաթկէն Սիւնի 40 դրշ., Կռունկ 29, Կռուի 103, Բեռդ 44, Վարչական 20, Հրայր 44, Երկաթ 44, Արշակունեաց 103, եւս 54, Լոյս 20, Գժոխք 53, Ասոս-Թաքուլ 100, Վարչական 10, Փարոս 11, Սեւ-քար 27, Հազրէի 22. 20, Ազատ 36, Կռուի 38, Կռունկ 29, Վարդգէս-Գիսակ 120, Այրոզի 52, Վարչական 8. 20, Արամ-Թաքուլ 297, Ասոս-Թաքուլ 36, Բաթկէն-Սիւնի 120, Արմատ 11, Պողպատ 26, Հին Արշակունեաց 44, եւս 14. 20, Ե. Փ.է պարտիզի փոխարէն 38, Կայծակ 45, Պողպատ 16, Վարչական 10, Ծառ Մանացու 153, Փարոս 10, Կռունկ 58, Ազատական 13, Հազրէ 24. 20, Սեւ-քար 27, երեկոյթի զուտ հասոյթ 2358. 20, Թատրոնի 3669. 30, Թաքուլ-Արամ 140, Փարոս 12, Նոր Սերունդ 57, Արհեստ. միութեան նալեն դասակարգի 6. 30, Այրոզի 30, Հազրէ 26, Արտավայրի հօր խմբեր 144, Ակունք 45, Վարչական 10, Կռուի 18, Արհեստ. միութեան դերձակներու զանձապանը 40. 20, կօշկակարներու զանձապան Գիսակ 38, Սափրիչներու զանձապան Գնդակ 8. 10, Գործակատարներու՝ 37. 30, Սափրիչներու՝ Գնդակ 28. 30, Կօշկակարներու՝ Գիսակ 30, Սափրիչներու՝ Գնդակ 42 դրշ.: Դումար 8693 դրշ. 10 փարա:

Սալնոյ-Զորի կոմիտէն՝

1908 սեպտեմբերէն մինչեւ 1909 փետրուար. — Հանգանակութիւններէ՝ Զ. Գր. 25 օսմ. ոսկի, Տ. Դր. 20, Մ. Շ. Ղ. 15, Եղբ. Ես 12, Ա. Ա. 12, Մ. Բա. 10, Մ. Բա 10 եւ 20 դրշ., Ս. Օխ. 10, Գ. Տա 10, Ս. Աբ. 7, Մ. Խա 6, Մ. Ա. 6, Ն. Մա. 5, Մի. Շո 5, Մ. Գար. 3, Օ. Ա. 2, Ա. Յս. 2, Ս. Բա. 3, Յ. Կա. 2, Ա. Բն. 3, Զանս 1, Ա. Բա. 1, Մ.-Բէ 100 դրշ.: Դումար 170 օսմ. ոսկի 120 դրշ.:

Ամասվնարներ հեռեւեալ խմբերէ՝ Կայծակ 200 դրշ., Արհեստաւորաց 120, Շանթ 100, Երկաթ 100, Մասեաց-Աղաւնի 130, Ծաղիկ-Առիւծ 108, Ազրայիլ 221, Անդրանիկ 100, Թորգոմ 39, Առիւծ 108, Խաչի-Դրօշ 27, Արեան 120, Արծիւեան 5 խմբերէ 126, Սերոբ-Աղբիւր 120, Մեղուակ 284 դրշ.:

ՍԱՄՍԱՐԱՅԻ խմբերէն՝ Շանթ 120 դրշ. 20 փր., Արտաւազդ 321, Բէժ 373, Կայծակ 310:

Ընդհանուր գումար 170 օսմ. ոսկի 3147 դրշ. 20 փր.:

ԲՈՒՐԱԿԻ շրջանի հեռեւեալ գիւղերու խմբերէն՝ Բալակ 268 դրշ., Մ-Վանք 96, Բար 400, Բանականց 80, Անաղ 200, Անի 731, Ուխտանոր 310, Անտարտ 139, Դարուն 140, Զօղան 300, Տ-Վանք 342. 20, Կտրիչ 170, Գժոխք 160, Տ-Վանք եւս 235: Դումար 3371 դրշ. 20 փր.:

ՌՍՀՎԻՐԱՅԻ շրջանի հեռեւեալ գիւղերու խմբերէն՝ Զուր 29 դրշ., Խուլ 60, Ծաղիկ 120, Բլուր 200, Սօսունիք 128, Սուրբ-Եզնիդ 80, Զորակ 100: Դումար 717 դրշ.:

Ընդհանուր գումար 170 օսկի եւ 7236 դրշ.: